Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Ωbn
776, 2356

1999

# ԻՆԿՎԻԶԻՑԻԱՅ·

## Ի ԳԱՂՂԻԱՑԻ:

Ի թարգմանութեանց

Յոհնէսայ Կարէնեանց

և

Միքայէլի Պատկանեանց:

## ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ·

Ի Հայրապետութեան Տեառն Տեառն Ն·
ՆԵՐՍԻՍԻ Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամ
Հայոց, ծայրագոյն Պատրիարգի առաքելական
մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի:


Ի ՏՓԽԻՍ

Ի Տպարանի Ներսիսեան Ուսումնարանի
ընծայեցելոյ յազնուական Գէորգայ Արծ-
րունւոյ:

'ի 1853 ամի· և Ազգական 1320

Լեռ
2356

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ. 5 го Февраля 1853 го года.

*Исправляющій должность Цензора И. Кайтмазовъ.*

ՇԱՀԱՅԱՆԻ
2356-97
2ք-779

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍՆ:

## ԻՍՊԱՆԻՈՅ ԻՆԿՎԻԶԻՑԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՈԼՈՍ ԵՒ ՄԱՀԻՑ ՄԻՆՉԵՒ 1820 ՏԱՐԻՆ:

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

Գեներալ - Ինկվիզիտօր Վալդէսի նահատակութեան վերջին ժամանակը:

Թագաւորութեան Փիլիպպ Բի:

Կարոլոս Եը Թողեց ժառանգ իւր որդի Փիլիպպ Բին, որին որ պատմութիւնը Տիբերիոսեան դահիճ է ասում.

Փիլիպպը շատ ժամանակից իշխում էր Իսպանիի վրայ, էնդուր որ կայսրը շատ շատ երկար ժամանակով ուրիշ տեղեր էր կենում, և հեռու երկրներումը մասնաւոր պատերազմներ էր ունենում: Որդին իւր հօրից աւելի խստասիրտ և մոլեռանդ էր: Փոխանակ պաշտպանելոյ ժողովուրդին Ինկվիզիցիայից, փոխանակ օգուտ քաղելոյ նրա պայքի վրա ունեցած անբաւականութիւնից և փոխանակ դէն դցելու Հռովմայեցւոց իշխանութեան լուծը, Փիլիպը վստահացաւ Ինկվիզիցիայի լուծի տակ խոնարհեցնել Իսպանիից դուրս ելած հպատակներին էլ, որոնք անդադար և Թունդ դէմ էին կենում դատարանի սրբութեանը:

Հէնց Փիլիպպը հաստատուեցաւ աթոռումը, իսկոյն հանեց շատ հրովարտակներ իւր կրօնական եռանդեան հոգւով և գեներալ - Ինկվիզիտօր Վալդէսի ձեռով: Առաջին հրովարտակով

սիրտ էր տալի մատնիչներին խոստանալով նրանց մեղապարտի կայքի չորրորդ մասը, եթէ նա կդատապարտուէր. Երկրորդը 1558 տարւից Սեպ․ 7 ից մահուան վճիռ էր սահմանում բոլոր ծախողներին, առնողներին և կարդացողներին արգելած գրքերի, որոնց ցուցակը տարուց տարի շատանում էր։

Կարելի է երևակայել, թէ այսպիսի խիստ կանոնների արդիւնքը ինչ պէտք է լինէին բարքերը պարփակած ժողովրդի մէջ, որոնք մտիկ էին անում ավտօ - դա - ֆէ վրայ իբրև զբօսանքի, որոնք կարծում էին, թէ Աստուծոյ հաճոյ գործ են գործում ուսեալ և լուսաւորութեան հետամուտ մարդկերանց մատնելով, որոնք առանց պատասխանատուութեան գործ էին ածում ամէն սնոտի հնարքները մեղապարտներին դատապարտելու համար, որոնց կայքը կողոպտում էին.

Ինկվիզիթօրները յուսալով, թէ Փիլիպպի պաշտպանութեամբ կարող են անել ինչ որ ուզենան, որքան Մօրէնա– Ալէքսէյ Սրբոյ կարգի նախադաղափարները դրեցին․ գլուխ (Գրոսսմէյստր)էլ կարգի նշանակուեցաւ Իսպանիոյ գեներալ - Ինկվիզիթօրը, անդամներ նշանակուեցան էն Իսպանիացիներից, որոնք չէին սերունդ Հրէաների, Մաւրերի կամ հերետիկոսների, և կամ էնպիսի քրիստոնէի, որ դատապարտուած և պատժուած էր Ինկվիզիցիայից։ Յայտնի երևում է, թէ էս կարգադրութեան նպատակն էր ցանկութիւն պաշտպանելու կաթոլիկական կրօնք, և թագաւորութեան մէջ մտ չթողնել Հրէաներին, Մաւրերին կամ որ և իցէ հերետիկոսներին։

Նախադաղափարը ընդունեցին Իսպանիոյ համարեա թէ բոլոր եկեղեցեաց փոխանորդները և քառասուն ազնուական գերդաստաններ.

Գեներալ - Ինկվիզիթօրը և ծայրագոյն Տրիբունալը (խորհուրդը) հաստատեցին էն կարգի կանոնները. միայն մնաց, որ թագաւորը ստորագրէ։ Նրան համոզեցին, թէ Ալէքսէյ Սրբոյ կարգը Իսպանիային մեծ օգուտներ կբերէ, մանաւանդ կ'աւելացնէ զինուորական զօրութիւնը և կ'ազատէ գանձարանը նրանց պահպանելու ծախսից. Փիլիպպը հրամայեց իրա խորհրդարանին վերաքննել էս կարգադրութեան գաղափարը, և շատ կարելի է թէ կստորագրէր էլ, եթէ մին ազնիւ Կաստիլեացի չհասկացնէր նրան, թէ Ալէքսէյ Սրբոյ կարգը կթուլացնէ թագաւորական իշխանութիւնը, երբոր գեներալ - Ինկվիզիթօրը կամենայ առ չարն

գործածել ֆանատիկ զօրքերին, որոնց նա դառնում է ծայրա-
գոյն գլուխ, թէ Ինկվիզիցիայի իշխանութիւնը առանց էնդուր
էլ շատ մեծ է, և թէ շատ անխելքութիւն և ողջամիտ քաղա-
քականութեան անհամաձայն կըլինի աւելի զօրացնել նրան զօր-
քերով նոր զինուորական կարգ:

Փիլիպպ Բ-ը շատ զգուշութեամբ պահպանելով իւր իշխանու-
թիւնը, ինչպէս տեսաւ բոլոր մտածքը յանձնելու զօրքը ղենեռալ
- Ինկվիզիտորներին, և յայտնեց թէ կարիք չէ տեսնում նոր կարգ-
սարքելու, և կարծում է թողնել էս նորաձևութիւնը ուրիշ ժա-
մանակի:

Եթէ հնար լինէր երևակայել էս զօրաժողովի բոլոր հե-
տևանքը իրանց զօրավոր ղենեռալ - Ինկվիզիտորով, որոնք պիտի
բաղկանային այնպիսի մարդկերանցից, որոնք պարտաւորած պիտի
լինէին կոյր հպատակուէ երդումով, էն ժամանակը կասկած չի մնալ,
թէ Իսպանիայի Ինկվիզիցիան էս նոր զօրութեամբ իւր իշխանու-
թեան տակ կարող էր գցել բոլոր Իսպանիան: Աստուած արաւ,
որ էս անգամը խելքի և ողջամիտ քաղաքականութեան ձայնը գտաւ
իրա համար ունկնդրութիւն և Իսպանիան մին ու յետ չխոխելով,
թէ և ծանրաքայլ, բայց անդադար գնում էր դէպի միա-
պետութեան դուռը:

Էս միջոցին մեկ չքաշուելով Փիլիպպի ընդդիմութեանը հերե-
տիկոսաց դէմ եղած խստութիւնը օրէ օր աւելանում էր: Պօղոս
Դ. պապը Ինկվիզիցիային իրաւունք տուեց մարմնաւոր դատարանի մատ-
նել բոլոր լուտերականներին, նաև եթէ կըկին անգամ ընկած
չըլինին, միայն եթէ բռնուէին էն հոգւոյ ուսման մէջ:

Երկրորդ պապական կոնդակը ոչնչացրուց արգելած գրքերը
կարդալու առաջուայ տուած հրամանը, և պարտաւորեց ղենեռալ -
Ինկվիզիտորին հալածել բոլոր էն գրքերը կարդացողներին կամ իրանց
տանը ունեցողներին: Նաև խոստովանահօրներին հրաման եղաւ հարցնել
խոստովանողներից, թէ չգիտե՞ն արդեօք ոքմինի, որ ունենայ էս
գրքերից, կարդում ըլնի ինքը կամ բաժանում ըլնի ուրիշներին.
Նմանապէս հրամայած էր տեղեկութիւն տալ ծայրագոյն խորհր-
դարանին էնչ որ իմանան էս մասին, վախենալով մեծ բանադրան-
քից: Խոստովանահայրերը եթէ չըկատարէին էս պարտաւորութիւնը,
պատժի տակ էին ընկնում իբրև մեղապարտ, թէև նրանց արձա-
կածը լինէր եպիսկոպոս, արք եպիսկոպոս կամ կարդինալ: Էս

նոր հնարքը անպատճառ պէտք էր աւելցնէր մատնութիւնները, շատ բազմութիւն մարդկանց դցէր բանտի և դատաստանի տակ և շուտ շուտ կատարէր աւտօ-դա-ֆէ։

Վալլադոլիդը և Սեվիլլիան ողջից աւելի գերազանցեցին էս վճիռների կատարելումը։ Առաջինի, այսինքն Վալլադոլիդի մէջ, ընդհանուր աւտօ-դա-ֆէ հանդէս կատարեցին 1559 Թուին Դոն Կարլոսի և իշխանազուն Յովհաննայի ներկայութիւնումը։ Քաղաքական աստիճանաւորներ, Իսպանիոյ շատ մեծամեծներ, մարկիզներ, կոմսեր, վիկոնտներ, բարօններ, ազնուականներ և երևելի տիկիններ ներկայ էին էս բարբարոսական հանդէսին։ Տասնեչորս մարդ էրուեցան կենդանւոյն, շատերը հաշտուեցան ապաշխարանքի տակ ընկնելով, մին կնոջ ոսկորները և պատկերները նմանապէս այրուեցան։ — Թագաւորական Կոնտրօլէր (հաշուատար) Պետր Կազալլայի կին Էլէօնօրայ Վիբերոյ ունէր իրա համար սեպհական մատուռ և գամբարան Վալլադոլիդումը սրբոյն Բենեդիկտոսի վանքումը։ Էնտեղ էլ Թաղուեցաւ կաթօլիկական եկեղեցւոյ ծէսով առանց փոքր ինչ չարափառութեան կասկածանքի. բայց Ինկվիզիցիայի Ֆիսկալը մեղապարտ հանեց նրան լուտերականութեան մէջ, յայտնեց, իբրու թէ նա մեռած է հերետիկոսութեան մէջ, էն բանտարկելոց վկայութեան վրա հիմնելով, որոնք մատնուած էին տանջանքի, կամ որոնց սպառնում էին տանջանք։ Էս վկաները ասում էին, թէ Էլէօնօրայ Վիբերոյի տունը Վալլադոլիդի լուտերականաց եկեղեցի է եղել, և էն հանդուցեալին հերետիկոսութեան մէջ մեղապարտ դատեցին, նրա յիշատակը իրա սերընդոց հետ միասին մատնուեցաւ անարգանաց, կայքը խլուեցան գանձարանը, հրամայուեցաւ նրա գերեզմանը փորել և ոսկորները հանել և այրել, տունը հիմքից քանդել և միւսանգամ շինելոյ հրաման չըտալ, և նրա տեղ կանգնեցնել սիւն խայտառակութեան մակագրով. և այս ամենայն կարգադրութիւնները կատարուեցան։

Այս զոհերի մէջ, որոնք փչացան այս աւտօ-դա-ֆէ ժամանակը, կար դօկտոր Աւգուստին Կազալլայ Էլէօնօրայ Վիբերոյի որդին, Սալամանկի քահանայ և կանոնիկ, կայսերական ողորմութեանց բաժանողը և քարոզիչը։ Նրան մեղապարտ հանեցին լուտերական աղանդի քարոզութեան մէջ, էն հոգւոյ խորին ասման մէջ Վալլադոլիդումը, և Սեվիլլայի հերետիկոսների հետ թղթակցութեան մէջ։ Կազալլան շատ անգամ ցրեց բոլոր իրա վրա բար-

դուած ամբաստանութիւնները, հաստատեց իւր ապացոյցները երդմամբ, երբ որ այս երդումը կարող էր տեղիք ունենալ հրապարակական հարցմանց ժամանակը։ Յետոյ կարդեցին տանջանք, և Սալամանկի կանոնիկը մատնուեցաւ բանտի մէջ տանջանքի։ Ի հարկէ կարիք չկար էս միջոցը գործածելու, էնդուր որ մեղապարտը խոստացաւ ամէն բանը խոստովանել իւր քահանային, դրեց մանրամասն խոստովանութիւն աւելցնելով, թէ նա յիրաւի լուտերական է էլել, այլ չէ թէ ուսուցանօղ հերետիկոս, ինչպէս նրանք անդում էին, էնդուր որ ոչովին չէ քարոզել իւր ուսումը։ Յետոյ դրեց էն պատճառները, որոնք առաջ արգելում էին նրան հերետիկոսութիւնը վիզն առնել, և խոստացաւ վերադառնալ կաթոլիկութեան, եթէ հաշտութեան հրաման կըտան։ Բայց Ինկվիզիթօրները միտք էլ չէին անում ազատել նրան գլխապարտի պատիժից, էնդուր որ վկաները սատէկ անդում էին, թէ նա աղանդի ուսուցիչ է էլել, թէ և մեղապարտը մինչև մահուան պատիժի վերջին ժամն էլ ամենայն տեսակ հնարքներով իւր դարձը յայտնում էր։ Էս դարձը նրան միայն մին ողորմութիւն կարաց անել, այն է, փայտակոյտի վրա դցուելից առաջ թոկով խեղդուիլ։

Ֆրանցիսկ Կազալլա Օգուստինի եղբայրը Գոռմիկոսի ծխատէր քահանան առաջ բոլոր ամբաստանութիւնները ցրեց, յետոյ տանջուելիս բոլորը վիզն առաւ, երդումով հաստատեց իւր ցուցմունքը և խնդրեց, որ նրան հրաման տան հաշտուելու. բայց էս ողորմութիւնը նրան չտուին, յետոյ մատնեցին մարմնաւոր դատարանի, թէ և չէր հաստատուած նրա կրկին ընկնիլը և աղանդի քարոզիչ լինելը, այլ միայն էն դարդակ պատճառաւ, թէ նրա զղջումը առաջիկայ մահի երկիւղից առաջ եկած է կարծում։ Իրաւի, երբոր նրան բարձրացրին էշաֆօթի վրա, և երբ նա տեսաւ թէ իւր եղբայրը զղջում է և գովում է կաթոլիկութիւնը, ծիծաղեցաւ նրա յորդորանքի վրա, նշանացի անարգեց նրան իբրև երկչոտի, և աւանդեց իւր հոգին կրակի մէջ շատ հանգիստ, առանց փոքր ինչ անգամ տրտմութեան կամ յուսահատութեան նշանի։

Բէատրիչայ Վեբերոյ Կազալլայ վերոյիշեալ երկու ողջակէզների քոյրը առաջ վստահացաւ ընդունութեամբ ցրել ամբաստանութեան բոլոր յօդուածները, յետոյ տանջանքի մէջ բոլորը վիզն ա-

ռաւ և խնդրեց հաշտութեան հրաման. բայց տասը ձայնի դէմ երկուսը միայն իրա կողմն էին. գլխաւոր խորհրդարանը վճռեց նրան կենդանույն այրել։ Բեատրիչան խոստովանեցաւ, խեղդուեցաւ և ապա բոցերին մատնուեցաւ։

Ալֆօնս Պերեց Գալինցիի հօգեւոր հայրը, դօկտոր (——ցիւ) աստուածաբանութեան, լիցենցիատ Անտօնի Գօբրեյուելօ, Տօրօ քաղաքի փաստաբան (ադվօկատ) Յովհան Ալբերո Կազալլան նոյնպէս դատապարտուեցան հերետիկոսութեան մէջ, և մերկ շրջելով բոլոր ցուցմունքին և զղջումներին մատնուեցան մահու, ինչպէս որ Կոստանդիա Կազալլան էլ, որ նրանից յետոյ թողեց քան և չորս որդիք որբութեան մէջ։

Երկրորդ Ալֆօ-դա-ֆէ կատարուեցին Վալլադօլիդումը նոյն տարւոյ հոկտեմբեր ամսումը։ Ինկվիզիտօրները ցանկալով յատուկ պատիւ տալ Փիլիպպ Բին նրա Նիդերլանդից յետ դառնալու, պատրաստեցին հանդէսը առաջինից աւելի փառաւոր։ Տասներեք անձինք և մին մեռել մատնուեցան կրակի, և ուրիշ շատ անձինք դատապարտուեցան հաշտութեան և ապաշխարանքի։ Գեներալ-ինկվիզիտօրը իբրև Սեւիլլայի արք եպիսկոպոս էս հանդէսումը պահանջեց Թագաւորից նոյն երդումը, որը որ նա տուել էր առաջին հանդէսի ժամանակը։ Դօն Կարլոսը և Թագաւորի աղջիկը նոյնպէս երդում արին, թէ նրանք պիտի պահեն և պաշտպանեն Ինկվիզիցեան և լուս պիտի գցեն ամենայն բան, ինչ որ լսեն ամենից հաւատոյ դէմ։ Փիլիպպը կատարեց էս ծէսը և ստորագրեց խոստումը, որը որ յետոյ բարձր ձէնով կարդաց Ինկվիզիցիայի ատենադպիրը բոլոր ժողովականների միջումը։

Դատապարտուածների թւումն էր Դօն Կարլոս Սէզօ Վէրօնից ազնուական, Պիաչենցայի եպիսկոպոսի որդին, որ էր երևելի ազգատոհմից և յարգոյ իրա խելքով և ուսմամբ։ Նա իրաւի շատ լաւութիւններ էր արել Կարլոս Ե կայսրին։ Նրան բանտը դցեցին Լօգրոնիումը, մին տարի պահեցին Վալլադօլիդի դաղանի բանտումը և մին տարից յետոյ յայտնեցին նրան, թէ մահապարտ է։ Դօն Կարլոս Սէզօ թուղթ պահանջեց, գրեց խոստովանքը և վերջն առաւ, թէ լուտերական է, հաստատելով միանգամայն, թէ այն ուսումը ճշմարիտ է և նրա համար նա յանձն է առնում մահը։ Ամբողջ գիշերը համոզում էին նրան, բայց 'ի զուր. նրա բերնումը բան կպկեցին, մինչև աւֆօ-դա-ֆէ ժամանակը, որ չը-

կորողանոյ ուսումը քաղել: Երբոր բերին նրան սիւնի մօտ և բերանը բաց անելով համոզում էին խոստովանելու, նա խոստովանահօրին մօտ չթողեց և բարձր ձէնով պահանջեց, որ փայտակոյտին վրան տան. դահիճները չուշացրին նրա ցանկութիւնը կատարել. Նոյն հանդէսումը այրուեցան Պետրոս Կազալլայ քահանան, Դոմինիկ Սանխեզ Մէլլայ Ենդրիանի քահանան, Ֆրանցիսկ Դոմինիկ դոմինիկեան քահանան, Կատարինէ Օրտիզ Մէոցի կոյզէ կոյսը 21 տարեկան. Յովհաննայ Սանխեզ, որ նոյնպէս կրօնաւորուհի էր, լսելով իրա դատակնիքի հաւնուը, սպանեց իրան մկրատով, բայց նրա մարմինը մատնուեցաւ կրակի:

Համարեա թէ բոլոր էս հանդէսումը այրուելու և տանջւածների պատժապարտները էին հարուստ և երևելի ազգատոհմերից. նրանց մէջ կային շատ կրօնաւորներ և կրօնաւորուհիներ: Սրանից կարելի է հետեւցնել, թէ Լուտերի կարծիքները վանքերն էլ էին մտել, որ գտել էին իրանց շատ հետևողներ.

Ափթօ-դա-ֆէ հանդէսի ժամանակը Հռոմէումը մեռաւ Պօղոս Դը: Ժողովուրդը անիծելով նրա յիշատակը ելաւ Ինկվիզիցիայի պալատանէ, փշրեց նրա արձանը Կապիտոլէումը, դատարանը իրա դիւանով, դուրս թողեց բոլոր բանտարկեալներին և ընդհանուր շփոթ հանեց: Բայց այսպիսի աղմուկը չվախացրուց Իսպանիոյ Ինկվիզիտօրներին: Մարդկութիւնից հեռու աֆթօ-դա-ֆէ առաջուայ պէս կատարում էին ամէն քաղաքներումը: Իսկ Վալլադօլիդումը պատրաստում էին նոր աֆթօ-դա-ֆէ, որը որ նշանակած էր Փիլիպ Բ-ի էս քաղաքի տես գալու պատիւի համար: Թէպէտ Թագաւորը էս ժամանակը ուրիշ տեղ պարապում էր իրա մարդասիրութիւնը ցոյց տալով, բայց աֆթօ-դա-ֆէ կատարուեցաւ: Էնտեղ էրեւցան 14 մարդ և երեք ուսումնական դօկտօրների ոսկորներ, որոնց մէջն էին և Կոնստանդին Պէրեցի Կազալլա Էլի բարեկամի ոսկորներն էլ: Պէրեցը մեռաւ դատարանի բանտումը անգութ տանջանքից յետոյ: Հանդէսը սկսուեցաւ Յովհաննայ Բոզորկի անպատուութիւնը վերցնելով, որ բանտարկուած էր իրա քըրը լուտերականութիւնից ետ չքաշուելու համար, որով նա կարծէքի տակ էր ընկել: Ինկվիզիտօրները հասցրին իրանց չարութիւնը անլսելի դաժանութեան: Չբաւականալով, որ էս վեց ամսուայ ողորմելի երկուհոգինը ազատուի, նրան գցեցին կեղտոտ բանտի մէջ. յետոյ, երբ որ նա ծնեց, խլեցին

նրանից երեխան և մօրն չլսալով նրա անառողջութեանը, գցեցին նրան այնպիսի սաստիկ տանջանքի տակ, որ նրա նազելի և նիհար անդամները կոտրուեցան թոկերից և ուսերը ողերի պէս փշրում էր։ Հենց ձեռի վրա տարին նրան բանտը, մեռաւ։ Ընդութ տանջանքի մէջ նա համառ հերքում էր բոլոր ամբաստանութիւնները, և էս հրէշները նրա կեանքը քանդելուց յետոյ, իրանց բարբարոսութեան զոհը անմեղ հրապարակեցին, կարծելով, թէ ընդրով կըծածկեն իրանց չարագործութիւնը։

Ինկվիզիթօրները իրանք խոստովանում էին, թէ տանջանքը փչացնում է շատ անմեղ մարդ մեղաւորների հետ, բայց չըվախենալով էս զարհուրելի ճշմարտութիւնից, ասում էին, թէ փչացած հարիւր անարատ կաթոլիկների մահը ափսոսալու չէ, էնդուր որ բաց է անում նրանց համար դրախտի դուռը, բայց մին դուրս սպրդած հերետիկոսը կարող է փչացնել ուղղափառների անթիւ բազմութիւնը։ Ուրիշի ծանր պատասխանատւութեան տակն էին գցում իրանց էս անիրաւ դատաւորները, որոնք իրանք էլ պատրաստւում էին կանգնել Աստուծոյ դատաստանի առաջը։

Գործելով այսպիսի խաւարութեան հոգւով Սեւիլլեայի Ինկվիզիթօրները վճռեցին հարիւր գաւառացի հալուած անարգ և ատելի մարդոյ համար։ Մին Ընոան Սանխեց անուն մարդ դուրս եկաւ մեղապարտ հօրը դէմ սուտ վկայութեան մէջ, որին մատնել էր, Թէ իբր իրա երկրորդ որդուն թլփատել է, և յետոյ խոստովանեցաւ, թէ միայն ցանկանում էր տեսնել իրա հօրը փայտակոյտի վրա։ Ուրիշ զարհուրելի զանազանութիւն է Բո-գոսկի բարբարոսական սպանութեան հետ։ Ինկվիզիցիայի պատմութիւնը ներկայացնում է դատարանի կարեկցութեան հազարաւոր օրինակներ այնպիսի մարդկերանց, որոնց դէմ օրէնքը կըտար իրա դատապարտութիւնը. և ի՛նչ էր նշանակում էս կարեկցութիւնը, եթէ ոչ կողմնապահութիւն մատնիչներին։

Տոլեդումը, Սարրագօսումը, Վալենցիումը, Մուրցիումը, Լօգրօնիումը, Գրենադումը, Կուէնցումը, և Հնդկաստաններումը Ինկվիզիթօրները ջանք էին անում յետ չըմնալ գազանային անգթութեան մէջ Սեւիլլեայից և Վալադոլիդից։

Ամբողջ հատորներ կարելի է լցնել էս շրջանի առարկաներով։ Դատարանը անդադար հետազօտում էր ոչ միայն լուտերականութեան մէջ կասկածաւորներին, այլ և կատաղութեամբ

հալածում էր Հրէաներին և Մահմետականներին. նա և բռնեց էնպէսներին էլ, որոնք պատկանում էին քաղաքական դատարանին։ Այսպէս Սարրագոսսում դատապարտեցան մահուան մտրակի և հինգ տարուայ նաւարանի ծառայութեան էնպիսի յանցաւորներ, որոնք Ֆրանսիայ ձիեր էին տարել, կամ մաքսանենգութեամբ (կօնտրաբանդ) անց էին կացրել ծծումբ, շօրայ և վառօդ։

Ալդեցի կառավարութեան ժամանակում դատապարտած և պատժածների կարգում տեսնում ենք։

1. Բանտապահներ, որոնք դատապարտեցան մահու մտրակով ծեծուելու և տասը տարի նաւարանում ծառայելու աքսորի, ինչու որ թոյլ էին տուել մին քանի մեղապարտների իրար հետ խօսել, և մին քանիսի հետ հեզութեամբ էին վարուել։

2. Մին մահուդ ծախող, որին այրեցին դատարանի բանտապետի դէմ ունեցած դիտաւորութեան համար։

3. Շատ քամբաղղներ, որոնք Ինկվիզիցիայի բանտերից դուրս գալից յետոյ, պատմել էին էնտեղ տեսած արանց և կանանց զարհուրելի տանջանքները։

4. Մին անդամ Սեվիլլայի քաղաքական խորհրդարանի, որ ասել էր, թէ աւագ հինգ շաբաթի օրը շինած սեղանի համար մսխուած մեծ գումարը կարող է օգնել շատ գերդաստանների, որոնք հաց չունին, և էս բանը աւելի աստուածահաճոյ կըլինէր։

Վերջապէս այս շրջանի ողջակէզների մէջ հաշւում են Արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, հոգևոր հայրեր և կրօնաւորներ, Իզուիտի գեներալներ, կրօնաւորուհիներ, Հրէաներ և Մաւրեր, որոնք վերադարձան Աֆրիկայից յուսալով հանգիստ մեռնել իրանց հայրենի երկրում, ուսեալ և ճշմարիտ բարեպաշտ մարդիկ, որոնք չէին գովում Ինկվիզիցիայի կարգադրութիւնք։ Ամբողջ գերդաստաններ փչանում էին փայտակոյտի վրա մին օրում և չէր անց կենում տարի, որի մէջ մին Ինկվիզիցիայ չըկատարէր մին կամ երկու անգամ ընդհանուր աւտօ-դա-ֆէ, հաշւի մէջ չըդնելով մասնաւոր դատաստանները և հաշտութիւնները, որոնք որ կատարւում էին սահմանած ժամանակներում։

Իսկ Ալդեցի ժամանակում, հակառակ հասարակական իրաւանց և Իսպանիոյ թագաւորի ուրիշ Եւրոպական դրանց դաշանց դէմ, դատարանը հրամայեց բանտարկել, դատել և մահի

մատնել իբրև լուտերական, Անգլիոյ, Ֆրանսիոյ և Հնդկաս-տանեայց վաճառականներին, որոնք եկած էին Իսպանիա հարուստ բարձուած նաւերով, որոնց Իսպանիան տիրեց առանց փոքր ինչ կասկածի։

Այնու ամենայնիւ մօտիկ չլսելով էնքան խլած կայքերին և հաշտուածների վրայ դրած տուգանքներին, դատարանի գանձարանը միշտ դատարկ էր։ Ուստի նա խնդրեց պապից կոնդակ, որ հարկ դնէ եպիսկոպոսների և կանոնիկների եկամուտից վրա, բայց եպիսկոպոսները և կանոնիկները չուզեցին տանել էս ծանրութիւնը և հեռացրին իրանցից, թէ և ոչ բոլորովին։

Փիլիպպ Բը և Ալւեցը պակաս սառնութեամբ չէին վարւում էն ազգերի հետ էլ, որոնք սորադրած էին իրանց հրէշանման իշխանութեանը։ Ֆլանդրերոյ կոմսութեան բնակիչները, որոնք դիմանում էին Կարլոսից ուղարկած Ինկվիզիթորներին, ժամանակաւոր համարելով նրանց, զարհուրեցան երբոր լսեցին, թէ Փիլիպպը ուզում է տալ 18 ծխական Ինկվիզիցեայ Իսպանիոյ նման, և մերժեցին էն արինածարաւ դատարանը։ Այսպիսի անհնազանդութիւնը Փիլիպպի բնաւորութեանը դուր չեկաւ, և պատճառ դառաւ երկարատև արինահեղ պատերազմների, որոնք սպառեցին Իսպանիոյ հարստութիւնը և զօրութիւնը, և էն պտուղը բերին միայն, որ էս նահանգները ազատուեցան և հաստատուեցաւ Հոլլանդիական հասարակապետութիւնը։

Փիլիպպը կարաց Սարդինիոյ կղզին հնազանդացնել Իսպանիոյ Ինկվիզիցիային, բայց մեծ անյաջողութեան հանդիպեցաւ, երբոր կամեցաւ մտցնել նրան Միլանի մէջ էլ։

Քաղաքացիք, ազնուականները, եպիսկոպոսները և բոլոր պաշտօնատարները յայտնի ընդդիմացան Տրիբունալին (դատարանին), որ աւելի էր բոլոր Եւրոպային, և բորբոքուած աղմուկները այնքան ժամանակ չըհանդարտեցան, մինչև որ Գուբեռնատորը նախազգուշակելով իրա Թագաւորի դիտաւորութեան անյաջողութիւնները, հաճեցրուց նրան հանդարտեցնելու տաքացած Միլանցիներին, թողնելով էս գաղափարը։

Փիլիպպը նմանապէս պարապում էր Ինկվիզիցիոյ կարգելով Ամերիկումը. բայց էնտեղ միայն դատարաններ սարքեց՝ Լիմա, Մէքսիքայ և Կարթագէն քաղաքներումը։ Էս դատարանները սորադրեալ էին Իսպանիոյ գէներալ-Ինկվիզիթօրի տեսչութեանը։

Առաջին աւտօ-դա-ֆէ, որ կատարուեցաւ Մեքսիկումը Ֆերդինանդ Կորտեզի մեռած տարին, որ էր նուաճող էս լայնատարած կայսրութեանը, այրուեցան մին Ֆրանցուզ և մին Անգլիացի, և աւելի քան 80 մարդ դատապարտուեցան զանազան պատիժների:

Վերջապէս Փիլիպ Բ-ի իրա հպատակաց հոգւոյ փրկութեան հոգսը նրա խելքումը մին միտք ծնեցրուց՝ ստեղծել ծովային Ինկվիզիցիայի դատարան, որի պարտաւորութիւնը լինի ծովի վրայ եղած հերետիկոսներին գտնել և հալածել: Այս դատարանը անուանեցաւ նաւական Ինկվիզիցիոն, յետոյ նաւատորմիղական և զինուորական: Բայց նրա կեանքը երկար չքաշեց ծովականների մէջ, ինչու որ, շուտով շփոթեց ծովագնացութիւնը:

Նաւերը որոնք գնում էին Կալլյաօից (Պերուի ծովահանգիստ) նաւահանգստից մինչև 'ի Կօնսէպսիօն (Չիլիայում), երկար ժամանակ չէին վստահանում աչքից հեռացնել էն երկիրները, և էս խաղաղ ծովի վրայ ման եկողները ճանապարհորդութեան համար գործ էին ածում ամբողջ տարի: Մին եւրոպացի նաւաստի, դիտելով քամիների ընթացքը, անց էր կենում մին ամսումը. նրան կախարդ մեղադրեցին. Ինկվիզիցիան իրա ծիծաղական տգիտութեամբը դեռ աւելի չդատած հրամայեց բռնել և բանտը դցել քաջ նաւաստին. սակայն նա շուտով արդարացաւ. բաւական էլաւ կարդալ նրա օրագիրը և հասկացան, որ այսպիսի յառաջադիմութեան համար հարկաւոր էր միայն ափերից հեռանալ. յետոյ էս ծովագնացութեան ձևը հասարակաց դառաւ:

Նաւական Ինկվիզիցիայի քամակից սարքուեցաւ Ծովապահական Ինկվիզիցիոն, որոյ պարտաւորութիւնը էր արգելած գրքերը ներս չթողնել. բոլոր նաւահանգիստներումը կարգուեցան Ինկվիզիցիայի գործակալներ և նրանց տնօրէնութիւնները շուտով սաստիկ հարուած տուին Իսպանիոյ ծովային վաճառականութեանը:

Փորթուգալից Թագը, որ ժառանգութեան իրաւունքով ընկաւ Փիլիպ Բ-ին 1580 տարիին, նրան միջոց տուեց մին անգամ էլ ցոյց տալ դատարանին իրա նախանձայուզութիւնը, և հոգս անել հաւատոյ գործոց մէջ միութեան համար. բայց էս փորձը մնաց անյաջող, ինչու որ Փորթուգալցիք ընդունեցին նոր Թագաւորին խիստ պայմաններով թէ Թագը բոլորովին Իսպանիից կախուած լինի, թէ Թագաւորութիւնը կառավարուի իրա սեպ-

հական ատրճանաւորներով և Լիսաբօնում կարգած խորհրդարանով և չըպարտաւորուելով դիմել Մադրիտ և օգնել նրա մէջուին:

Աւտօ-դա-Փէ մահաբեր ճառագայթների մօտ, որ իւր կրակներով լուսաւորել էր բոլոր Իսպանիան, Փիլիպպը մտորում էր հնարքներ գտնել էն անյաջողութիւնները, որոնց Ինկվիզիցիան հանդիպեցաւ Անգլիումը, Ֆլանդրիումը և Փորթուգալիումը, բայց դատարանը ինքը տեսաւ անհրաժեշտ հարկաւորութիւն ձեռք առնել շուտափոյթ և թունդ հնարքներ կաթոլիկ հոգեւորականաց դէմ, որոնք չարաչար էին գործածում իշխանութիւնը և խոստովանահօր պարտաւորութիւնը: Այս դայթակղութիւնը մինչև էն աստիճան սաստկացաւ, որ պապը Իսպանիայ Ինկվիզիտօրներին կոնդակ ղրկեց, հրամայելով հալածել բոլոր հոգեւոր հովիւներին և կրօնաւորներին, որոնք մեղապարտ կ'երևին հասարակաց չափով: Վալդէսը ինքն էլ տեսաւ, թէ ժամանակը համարեա թէ բոլորովին մոռացրել է դատարանի հին կանոնադրութիւնները, և թէ Ինկվիզիտօրները միևնոյն սովորական ճանապարհով գործում էին բոլոր մեղքերը. ուստի և վստահացաւ նորաձևութիւնները անել էս կարգում: Ի հարկէ էստեղ համար բաւական կըլինէր կրկին տպել Տօրկուէմադայի և Դէզէի կանոնադրութիւնները, բայց որովհետև էն ժամանակից մինչև սրա օրը շատ անօրէն դիպուածներ էին պատահել, որոնք հարկադրել էին Ինկվիզիտօրներին զանազան յաւելուածներ անել, էնդուր համար Վալդէսը լաւ համարեց հաւաքել բոլոր կանոնադրութիւնները և շինել լիակատար ժողովածու բոլոր կանոնների, որոնք փորձով օգտակար էին համարուած:

Ըստ այսմ 1561 տարիի սեպտեմբերի 2 ին շատ ժողովներից յետոյ, որոնց մէջ ներկայ էին գտնուում ծայրագոյն խորհրդարանի անդամներն էլ, ընդհանուր-Ինկվիզիտօր Մադրիտում հրատարակեց էդիկտ (կանոնագիրք) 81 անդամներով, որ դառաւ Ինկվիզիցիայի կանոնագիրք գործոց ընթացքի և վախճանական վճռահատութեան համար:

Սակայն Վալդէսը չէր մոռել անում նոր կանոնադրքերին էն դիպուածներում, երբոր մին քանի գերդաստաններ խնդրում էին վերականգնել իրանց ազգականների պատիւը և յիշատակը, որոնք անիրաւացի դատապարտուած կամ մեռած էին դաժանի բանտերում: Ինկվիզիցիան պարզ տեսնում էր, թէ էն ժամանակ նրան

կըստիպէին յետ դարձնել հարուստ կայքերը, որոնց նա տիրում էր շատ տարիներից. և ահա՛ էսուր համար նա չէր պահպանում նոր կանոնները: Նոյնիսկ դիպուածներումը էս օրէնքները ոչինչ չէին խնայում նա և էն յօդուածների մէջ, որոնք սահմանած էին մեղապարտներին պաշտպանելու համար: Աւելին կամքը և խոստումները առաջուայ պէս տիրապետում էին բարբարոսական դատարանի դատերի մէջ:

Յետոյ Մալդէցը գործ դրեց ամենայն ջանքը Կարրանցի հետաղօտութեան համար, որի համար մենք վերը խօսեցանք: Այս Արք եպիսկոպոսի գործը, որ դատել էր քսան և չորս գիրք ամբողջ Թերթի (ֆոլիոյ) տարածութեամբ, և այժմ մինչ 1200 երես ունէր, ամենից աւելի կարող է ցոյց տալ դատարանի չարամիտս դիտաւորութիւնները:

Բարդուղիմէոս Կարրանցա՝ բանիբուն դասատու (պրօֆէսոր) աստուածաբանութեան՝ էր խիստ առաքինի Իսպանիացի: Նորա բարոյականութիւնը, բարեպաշտութիւնը և աղքատասիրութիւնը սեպհականեցին նրան հայրենակցաց սէրը և Թագաւորի ողորմութիւնը: Կարոլոս Ե.ը ղրկել էր նրան Տրիդենտեան ժողովը իբրև աստուածաբան. Փիլիպպ Բ.ը ընտրեց նրան խոստովանահայր և նշանակեց Տոլէդոյի Արք եպիսկոպոս: Պօղոս Գ. պապը, լաւ ճանաչելով Կարրանցին ժողովքումը, չ'ենթարկեց նրան փորձի, ինչպէս Հռովմայ դահը սովորաբար հարցաքննում էր նորընտիր եպիսկոպոսներին, և տուեց նրան կոնդակներ առանց ծէսերի:

Մեծ Ինկվիզիթօրը իր անսահման ատելութեամբը և նախանձովը էնքան սատանութիւններ բանեցրուց մին քանի եպիսկոպոսների մօտ, մինչև կարող Կարրանցի վրայ լուտերականութեան կասկածի շուքը գցել, և 'ի մեծ զարմանս բոլոր Եւրոպայի, Կարրանցին բռնեցին, նրա համար բանտ նշանակեցին էն տան մին մասը, ուր տեղ բնակում էին իրանք Ինկվիզիթօրները, պարտաւորելով մօտիկից մօտիկ տալ նրա վրայ: Առաջ արք եպիսկոպոսը չէր կամենում հնազանդել ընդհանուր-Ինկվիզիթօրի դատարանին, բայց երբ պապը ուղարկած կոնդակով հրամայեց շարունակել քննութիւնը, էն ժամանակ գործը շարունակուեցաւ անդադար: Կարրանցան ցրում էր գործը շատ փաստերով, որոնք միջնորդներին էլ հաստատում էին. էն ժամանակ ամենքը տեսան, թէ անշուշտ հարկաւոր է գործը ուղարկել Հռովմ, բայց չ'ուղարկեցին,

էնդուր որ դատարանի պետը և նրան ստորադրեալ անձինքը, որոնք յետոյ արևելեան եկեղեցւոյ մէջ մեծ պաշտօններ հասան, մեծ ամօթի և անարգանաց տակ կընկնէին։

Այնու ամենայնիւ Վալդեսը կարող հաւատացնել փիլիպպ Բ.ին և Միքաոս Դ.ին, թէ Կարրանցան ստոյգ հերետիկոս է, և էնդուր դուրս չէր թողնում նրան բանտից և շարունակում էր քննութիւնը. բայց որովհետև ապացոյցներ չունէր, որ բոլորովին կարողանար մեղապարտ դուրս բերել, նա ձգում էր գործը, և համարեա թէ ութը տարի այդ եպիսկոպոսին բանտից դուրս չըթողեց։ Կարծիք չկայ, թէ Կարրանցան մինչև մահը կմնար էնտեղ, եթէ մին դիպուած չըգցէր թագաւորի ձեռքը մեղապարտին օգտակար շատ դրաւոր ապացոյցները, որոնք Վալդեսը ջանք էր անում թագցնել։ Էն ժամանակ լուս ընկան Վալդեսի բոլոր սատանութիւնները և պապը զրկեց նրան պաշտօնից։ Կարրանցան ազատուեցաւ բանտից և կանչուեցաւ Հռոմ, որտեղ Միքաոս Ե.ը և վարդապետք ժողովոյն արդարացրին նրան։ Միևնոյն 1566 տարումն էլ Վալդեսի վէր ընկնելուց յետոյ, նա վերստին կարգուեցաւ իրա պաշտօնումը և երկու տարիից յետոյ մեռաւ։

Վալդեսը, ստացած լինելով Պօղոս Դ.ից լիակատար իշխանութիւն, դրած սահմաններից դուրս եկաւ. հանգիստ թողնելով Լուտերականներին և ուրիշ հերետիկոսներին, նա ուղղում էր իրա հարուածները երևելի մարդկանց դէմ, որոնք խորին աստուածաբանական գիտութիւններով և գերազանց առաքինութիւններով արժանացան Տրիդենտեան ժողովքումը ստանալ հաւատոյ հայր անուն։ Էս պատուելի հոգևորականներին, որոնք ամենայն զօրութեամբ Լուտերի ուսմանը դէմ կացան, բանիւ և գրով դատապարտում էին իբրև լուտերականութեան կողմնապահ, և Ինկվիզիցիան վստահացաւ բռնել նրանց։ Բարեբաղդաբար մին քանի հանգամանքներ, որոնք անկախ էին Վալդեսից, կտրեցին գայթակղեցուցիչ հետազօտութիւնները, որոնց միայն սկսելն էլ կարող էր յաւիտեան անարգանաց կնիք կպցնել ծայրագոյն խորհրդարանի վրայ։

Վալդեսը, որոյ նախանձայուզութիւնը հետազօտութեան մէջ ոչինչ բանով չէր դժուարանում, հրամայեց նմանապէս Մուրցիայի Ինկվիզիտօրներին հետազօտել Մարքօլի կայսեր որդւոյն, որ շատ դեռահասակ եկել էր Իտալիայից և մտնել էր։ Նրան

Մեղապարտեցին իբրև դիւթութեան և կախարդութեան ուսանող։ Ծայրագոյն խորհրդարանը հրամայեց նրան աւտօ-դա-ֆէ ժամանակը ներկայանալ խաւաքարտ (Չի—խոռոնճա) գդակով, որի վրայ քաշած էին սատանէք. յետոյ նրան բանտը դրին երեք տարի և վերջապէս աքսորեցին Վալէնցիայի, Սարրագոսիայի և Մուրցիայի Թագաւորութիւններից։

Վալդեցի Ինկվիզիտօրական կառավարութեան ողջակէզների մէջ տեսնում ենք էլ շատ անձինք, որոնք փառաւորեալ էին Իսպանիոյ եկեղեցումը, որք են՝ Բարդուղիմէոս Լաս Կազաս Ամերիկայի Չեապայի աբբ եպիսկոպոսը, և Եզուիտ կարգի երեք առաջին ընկերները՝ Իգնատիոս Լոյոլա, Լէնէ և Ֆրանցիսկ Բորջիա։ Իգնատիոսին դրեցին բանտը, նրա երկու ընկերներին եռևէն ընկան իբրև Փառասէլ - Իլլիւմինատների։

Տէս թէ ինչ է խօսում էս ժամանակը Եզուիտների համար Մելխիոր Կանօ Կանարիոյ Կ.րը եպիսկոպոսը Յօհան Րէգլային Կարոլոս Ե.ի առաջնոյ խոստովանահօրը գրած թղթի մէջ։ "Ես պնդում եմ ( Նա ասում չէ ), թէ էս մարդիկը Իլլիւմինատներ, կորուսեան մարդիկ են, որոնց սատանան վաղուց ուղարկել է ուղղափառաց հօտի մէջ ընտրեալների ժամանակից մինչև մեր օրերը. նրանք յայտնուել են եկեղեցու սկզբնաւորութեան հետ, և պիտի տևեն մինչև աշխարհի վերջը։ Բոլոր աշխարհին յայտնի է, թէ Աստուած բաց արաւ Նորին Սրբութեան աչքերը այս մեծ բանը ճանաչելու համար։ Եթէ Թագաւորը մտքը բերէ, թէ Լուտերը ինչպէս սկսեց գործել Գերմանիումը, և ինչպէս մին գլած կայծը մեծ հրդեհ հանեց, որը որ չէ հանգցնում ոչինչ տեսակ ջանքերով, էն ժամանակ կ'իմանայ, թէ էս մարդկանց (Իլլիւմինատների) արածն էլ կարող է Իսպանիոյ համար մեծ չարութիւն դառնալ և մեր Թագաւորը չի կարողանալ արմատախիլ անել թէ և կամենայ։,,

Դ հարկէ պատմութիւնը հաստատում է Կանարիոյ եպիսկոպոսի խօսքերի ճշմարտութիւնը, բայց այնու ամենայնիւ ծայրագոյն խորհրդարանը երբէք չէ կարող արդարացնել այս կարգի հիմնադրի վրայ արած հալածանքները, որի կենդանագէտ խորամանկութիւնը այնքան երկար ժամանակ մնամարտում էր Թագաւորների կարողութեան հետ։ Եզուիտները առաջ գերազանցում էին առաքինութեամբ։

Վալդէս ևս շատ ուսումնականների ետեւէ ընկաւ, որոնք չէին կամենում հնազանդել դատարկ սխօլաստիկական մտքերին. չը յարգելով որ ևէցէ իշխանութիւն, նա չէր կամենում տեսնել մտքի ազատութիւն։ Իրա քսան տարուայ ծառայութեան միջոցումը նա դատապարտեց 19800 զոհ, որոնցից 2600ը այրուեցան կենդանւոյն, 1200ը պատկերներով, 16000ը բանտը դրուեցան կամ քշուեցան նաւարանները։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ։

### Փիլիպ Բի Ինկվիզիտօրութեան վերջին ժամանակը։

Փիլիպ Բը ղեներալ - ինկվիզիտօր Վալդեսի պաշտօնը յանձնեց Սիգուենցի եպիսկոպոս և Կաստիլիոյ խորհրդարանի նախագահ Կարդինալ Դիէգօ Եսպինոզին։

Եսպինոզան Թագաւորի սիրականն էր, բայց էստուր մտիկ չըտալով Թագաւորի աչքից ընկաւ և իրա ծառայութեան վեցերորդ տարուայ վերջումը աքսորուեցաւ իրա նախորդի նման, մասնակից լինելով գործին Աստուրիոյ Թագաւորազնի, որ շատ յայտնի է պատմութեան մէջ և շատ վէպերի (ռօմանների) մէջ Դօն Կարլոս անուամբ։

Արքայազնի զարհուրելի մահը նիւթ դառաւ զանազան առասպելաբանութեանց և հրաշալից վիպասանութեանց, և Եւրոպան մինչև էս օր էլ համարում է նրան զոհ Ինկվիզիցիայի և սիրոյ։

Նոյն իսկ Ճշմարտութիւնի վկայութեամբ Ինկվիզիցիան չ'ենթարկեց Դոն Կարլոսին իւր դատաստանին, չըգրեց նրա համար վճիռ. ոչ թէ կերպը և ոչ թէ մը և իշէ սիրահարութիւնը խափանեց Թագաժառանգին չինեց առարկայ իւր հօրը և դատաւորների անսպառ խստութեան։ Դոն Կարլոսը էր հրէշ, իսկ նրա հայրը սառը բարբարոս - կեղծաւոր.

Մանկական հասակից Դոն Կարլոսը ցոյց էր տալի անգթութիւն. նրա կամակորութիւնը համարեա թէ հասնում էր միշտ կատաղութեան. հայրը հասկանում էր նրա հոգւոյ էս վատ կողմերը, գիտէր նրա բոլոր հակամիտութիւնները և զգում էր, թէ նրա սրտին զուարճանում էր սպանելով նապաստակներ և թռչուններ, որոնք բերում էր որսից և կարծես թէ նրանց փրփրտալումը և մեռնելումը ուրախութիւն էր զգում։ Այնպէս էլ անգթութեամբ էր վարւում Դոն Կարլոսը իւր ծառաների հետ և իւր դաստիարակ Հերցոգ Ալբայի հետ. Եսաուրից նրա կրթութիւնն էլ շատ վատ էր. նա չ'ունէր էն յատկութիւններից ոչ մինը, որոնք կազմում են հպատակների սէրը իրանց թագաւորի հետ.

Տասն և ինն տարեկան հասակումը վէր ընկաւ նա, ջարդեց իւր գլուխը և նրա գլխի վրա ծակ բաց արին. Թէև առողջացաւ արքայազունը, բայց միշտ նեղվում էր գլխացաւից, որը որ նրա ամէն պարապմունքը արգելք էր տալի, էնդուր որ անդադար նրա միտքը խառնում էր և նրա բնութիւնը անում էր անտանելի։ Եթէ վատ առողջութեան վրա աւելացնենք բնական տգեղութիւնը, դեղնած չոր կերպարանքը և ամուսնութեան անընդունակութեան երկիւղը, էն ժամանակը հեշտ կարելի է հասկանալ, թէ նա երբէք չէր կարող գտնել նորից սիրոյ զգացմունք իւր խորթ մօր սրտումը, ինչպէս կարծում էին ռոմանիստները, ևս տաւել գրել սիրահարական թղթեր։ Արքայազունը հազիւ թէ գրել գիտէր, երբէք չէր կարողանում կցել երկու խմաստ, ինչպէս կարելի է տեսնել էն գրից, որը որ նա գրել է Դոն Ժուան Եպիսկոպոսին, որը որ օրինակում ենք բառ առ բառ։

“ Իմ պարոն եպիսկոպոսին. Տէր իմ, ես ստացայ ձեր գիրը
“ անտառումը. ես առողջ եմ. Աստուած վկայ է, թէ ինչպէս
“ ես ուրախ կը լինէի տեսնել ձեզ և Թագուհիին, տեսէք,
“ ինչպէս կարող էք դուք էս անել, և շատ կ'ամաչենայ էս. Ես

ՅՍՏԱՆԻ

‘‘ եկի Ալամբրայից Բուտրագօ, և ընդամ շատ բաւական էի. Ես
‘‘ ման եկայ անտառումը երկու օր, և հիմի էլ ընտեղ եմ,
‘‘ չորեք շաբթից մինչև էս ժամանակը. Ես առողջ եմ, ես սրծայ-
‘‘ գիւղից, յունիսի 2 ին, իմ լաւագոյն բարեկամ բոլոր աշխարքի
‘‘ մէջ. Ձեր մեծագոյն, որ կ'անէ ամէն բանը, ինչոր դուք խըն-
‘‘ դրէք. Ես աքսյազուն. ,,

Այսպէս էր ահը Իսպանիոյ Թագի ժառանգ-պրէտենդէն-տի, որ էր աքսյազն սաստիկ, որ իրա ծննդեան իրաւունքը կանչ-ւում էր կառավարել տէրութիւնը գիտութեանց կրկին ծննդեան դարումը:

Ուրեմն ոչ տարաբաղդ սէրը և ոչ կրօնական կարծիքները չէին նրա յանցանքը. այլ վաղուց մտքումը դրած և երկար ժա-մանակ թագցրած իրա հայր Փիլիպպ Բ-ին սպանելու դիտաւորու-թիւնն էր, նմանապէս և նրա աքսյական իշխանութեան դէմ ա-պստամբելու դիտաւորութիւնը, որի նպատակն էր Նիդերլանդիան չփոթ գցել և առնել կառավարութիւնը իրա ձեռքը. Կարլոսը պատրաստւելով սպանել իրա հօրը փորձեց իրա դաշնակը շատ պալատականների վրա, որոնց միջումն էր և գեներալ-Ինկվիզիթօր Էսպինօզան դեռ նրա Թագաւորի սիրական լինած ժամանակը. Ազգյազունը դատապարտուեցաւ կեանքից զրկուիլ արքունի դա-տարանի բանաւոր վճռովը, որի մէջ առաջին տեղը ունէր գենե-րալ-Ինկվիզիթօրը. Փիլիպպ Բը հաստատեց վճիռը. Ուրեմն պարզ երեւում է, թէ Ինկվիզիցիի դատարանը էս բանումը մասնակից չէր, ենդուր որ գեներալ-Ինկվիզիթօրը միայն բարձրագոյն խոր-հրդարանի նախագահի տեղը ունէր:

Դօն Կարլոսին չըխեղդեցին կողնքումը, նրանից արիւն չը-թողին տաք աւազանի մէջ, ինչպէս որ դրած էր, այլ նա մեռաւ իրա մահճակալի վրա վեց ամսուայ հիւանդութիւնից յետոյ, որ պատճառւել էր չափազանց բարկութիւնից. Մին քանի պատ-մագիրներ ասում էին, թէ բժիշկը Թագաւորի հրամանով տուաւ նրան մահադեղ, բայց էս շատ դժուար է հաստատել, ինչպէս և վերի ասածները. Ամէնից ստոյգը էն է, որ Դօն Կարլոսի հի-ւանդութեան և խեղդարութեան ժամանակը Փիլիպը չուզեց նրան տեսնել և ներել, մինչև չտալով բոլոր Եւրոպայի տէրութեանց դեսպանութիւններին էս առարկայի համար. Նրա բարկութիւնը հանդարտեցաւ միայն որդւոյն մահուամբը.

Այս է սոյն պատմութիւնը Դոն Կարլոսի, թէ և զուրկ է ամենայն հրաշալի բաներից՝ ինչպէս նկարագրում են անհաւատալի պատմութիւնները. բայց կարող է տեղ ունենալ Ինկվիզիցիայի ժամանակագրութեան մէջ Փիլիպպ Բի թագաւորութեան ժամանակումը։

Եսպինոզա՝ երկու ֆանատիկների աշակերտը և յաջորդը՝ մեռաւ 1572 տարուայ սեպտեմբերի 5ին ջրարընոց մէջ 4680 այր և կին դատապարտելուց յետոյ, որոնցից 720ը այրուեցան կենդանւոյն, 360ը պատկերներով, 3600ը դատապարտուելով ապաշխարանքի վճարեցին իրանց ողջ կեանքը նաւարաններումը, բանտերումը կամ խայտառակութեան և աղքատութեան մէջ։

Նրա վերյ ելած ընդհանուր ատելութեան պատճառն էր բանադրանքի չարաչար գործածութիւնը կառավարութեանց դէմ, ինչպէս անում էին նաև միւս Ինկվիզիտօրները, և մանաւանդ Բարցելոնի քաղաքական կառավարութեան դէմ. բայց մանաւանդ Եսպինոզան ընկաւ Փիլիպպի բարկութեան տակ էն բանադրանքի համար, որը որ նա կարդացել էր Արրագոնից փոխանորդայ դեսպանութեան դէմ 1571 տարումը։ Բոլոր տէրութիւնը անբաւականութիւն յայտնեց և թագաւորը նորան զրկեց իրա սիրելին։

Եսպինոզի մեռնելուց յետոյ գեներալ-Ինկվիզիտօրի տեղը յանձնուեցաւ Պլազենցիի եպիսկոպոս Դոն Պեդր Պօնսեան Պօնսէին։ Պապը ուղարկեց նրա համար կարդինալ նոյն տարուայ դեկտեմբերի 29 ին, բայց էս գեներալի մահը էնքան շուտով վրայ հասաւ, որ նա չկարաց գնալ Մադրիտ իրա պաշտօնի տեղը։

Ժ.Ա. Ինկվիզիտօր Իսպանիոյ էր Տօլեդօյից Արք եպիսկոպոս կարդինալ Կուիրօգայ։ Նա յաջորդեց Պօնսեան Պօնսին 1573 ին։ Առաջին տնօրէնութեանց մէջ Կուիրօգան սարքեց մին Ինկվիզիցիայի դատարան Գալիցիումը, որ տեղ դեռ չէկար, և արգելած գրեանց ցուցակ հրատարակեց։

Կուիրօգի կառավարութիւնը երևելի է Ինկվիզիցիայի ժամանակագրութեանց մէջ դայթակղեցուցիչ գործով պատուաւոր անձանց շատ բազմութեան դէմ, և մանաւանդ Փիլիպպ Բի առաջին նախարար ([illegible]) Պերէցի դէմ, և էս բանի հետևանքն էլաւ Արրագոնից Ֆուէրօների ([illegible]) վերջացնելը, և ոչնչումն մեծ Իւստիցիարիայի ([illegible])։

1575 թուականին Կուխրօդան գործ բաց արեց Յովհաննու Երուսաղեմացւոյ Գրոսսմէյստերի (Մեծաւորի) հետ, որ կորցնելով Ռոդոսը հաստատուեցաւ Մալթայ կղզումը. - Գրոսսմէյստերը, ապաստանելով իւր լիակատար իշխանութեանը, չէր ուզում են-թարկել կղզին օտար դատաստանի և ոչինչ հաղորդակցութիւն ունենալ Սպանիոյ Ինկվիզիցիայի հետ, որ կամենում էր էն կղ-զումը դատարան սարքել. Նա պաշտպանում էր իւր իրաւունքը ամենայն զօրութեամբ և գործը վերջացաւ էնդրով, որ Սպանիոյ Ինկվիզիցիան ցոյց տուեց ուշաբքին, թէ նա չի վախենում յար-ձակել իշխանութեանց վրայ.

Նոյն միջոցումը նոյն բանը ցոյց տուեց նա բանադրելով Նաւարրեայ Թագուհի Յովհաննային, նրա որդի Հենրիկին և դուստր Բուրբոնեան Եկատերինէին։ Փիլիպպը և Ինկվիզիթօր-ները էս բանը էնքան յաջողութեամբ էին կատարում, որ պապը հրապարակեց Յովհաննային կամակոր հերետիկոս, խլեց նրանից թագաւորութիւնը և տուեց կաթոլիկ արքայազնին էն դաշամը, որ նա ազատէ տէրութիւնից բոլոր հերետիկոսներին։

Սպանիոյ Ինկվիզիցիան դատաստանի տակ դրեց նմանապէս Մօնտեզէ կարգի Գրոսսմէյստր (Մեծաւոր) Պետր - Լէւդոմէկ - Բոր-ջեային, և Հերցօգ Նաքայազուն Փալենզէ, և յետոյ ազատեց բո-լորին։

Նաեւ յիշատակաց արժանի է այս շրջանը նոյն իսկ Արիաս Նոպալի մեղապարտութեամբ հերետիկոսութիւն տարածելու հա-մար։ Պապը հրամայեց 'ի լոյս ընծայել աստուածաշունչը Խալ-դէական լեզուաւ և յառաջարկում էր, թէ աստուածային բանի ազգային լեզուաւ կարդալը շատ օգտակար կըլինի հաւատացելոց համար։ Բայց այսպիսի անօրէնութիւնը ընդդէմ էր նրա նախորդ-ների կոնդակներին ակամա Լեօն Ժ-ից, որի ժամանակը լոյս ըն-կան աստուածաշնչի շատ թարգմանութիւններ Լութերի և Պրո-տեստանտների ձեռքով։ Սպանիոյ Ինկվիզիցիան ամենայն հնարք-ները բանեցրեց, որ թարգմանութիւնները արգելէ, և հէնց էն քահանայապետը մեռաւ, իսկոյն ծայրագոյն խորհրդարանը նզովեց Արիասի աստուածաշունչը և նոյն իսկ պապին՝ հաւատոյ դեր-ծոց մէջ անուանէին։ Կարծում էլ են, թէ Արիաս Ն. մեռաւ մահա-դեղով, և թէ Փիլիպպ Բ-ը և Ինկվիզիթօրները մասնակից էին նրա մահին։

Երբ որ անգութ Փիլիպպը Սպանիոյ Դոն Ժուանի սեկ-րետար (սէկրէտէր) Յովհան Էսկոբեդոյին մահու դատապարտեց, էն ժամանակը հրամայեց բանտարկել նրա նախարար առաջին արքունի սեկրետար Անտոն Պերեցին, էնդուր որ, իբրու թէ նա դանդաղել է Թագաւորի անդթութեան վրայ, կամ լաւ ես ա-սել, ուզել է նրանից պրծնել: Պերեցը մնաց 12 տարի Մադ-րիտի բանտումը, վերջապէս գնաց Արրագոնիոյ կարծելով մնալ էնտեղ հանդիստ Թագաւորութեան Կօնստիտուցիի (Ֆուէրօ) պաշ-տպանութեան հովանաւորութեան տակը, որ Թագաւորին իրա-ւունք էր տալի ունենալ էնտեղ միայն Ֆիսկալ կամ մեղա-դրիչ - գործակալ:

Հէնց Պերեցը հասաւ Արրագոնիոյ, իսկոյն եկաւ էնտեղ արքունի հրովարտակ, որ հրամայում էր բռնել նրան, և Պե-րեցին բռնեցին կալանայումը. բայց նա բողոքեց, և ցոյց էր տալի Մանիֆեստացիա անուանեալ արտօնութիւնը. յետոյ նրան տարան Սարրագոսսայ և դրին Թագաւորութեան կամ ազատութեան բանտը, որ նոյնպէս կոչւում էր բանտ Ֆուէրօ: Էնտեղի բան-տարկեալները չէին Թագաւորի անմիջական իշխանութեան տակ և միայն կախուած էին Արրագոնիոյ մեծ Իւստիցիարիայից: Էն-տեղ ընդունում էին միայն ինքնակամ եկողներին և հասարակաց բանտից փախածներին: Էս էլ պէտք է գիտենալ, թէ Ֆուէ-րօյի բանտարկեալները արտօնութեան զօրութեամբը տանջանքից ազատ էին, երբեմն արձակւում էին խօսք տալով և գանկատում էին մեծ Իւստիցիարիային ամենայն մարդոյ մեղադրանաց վրայ: Մեծ Իւստիցիարիայի դատարանը իրաւունք ունէր ստուգել, թէ դատարանի վճիռը ընդդէմ չէ՞ արդեօք Թագաւորութեան օր և էլ Ֆուէրօյի, և էսպէս նա նման էր Ֆրանսիոյ Կասսացիօնի դա-տարանին. բայց 'ի սրանից Թագաւորութեան դաշանց զօրութեամբ, ում և լինէ ինդրանօքը իրաւունք ունէր յայտնել թէ, կամ Թա-գաւորը, կամ ուրիշ դատաւորներ, կամ դատաստանական ա-տեանները չեն պահպանել Թագաւորութեան դաշինքները և արտօ-նութիւնները: Այսպիսի դիպուածումը նա կարող էր նեղացած-ներին պաշտպանել զէնքով Թագաւորի դէմ, և խիստ կարէք ժամանակը նրա տասնմանաւորաց դէմ էլ:

Փիլիպպ Բ-ը շատ անգամ պահանջում էր հաստատ ժողո-վից իրա ձեռքը տալ Պերեցին. բայց ժողովը տասնիկ դէմ կա-

ցաւ և Թագաւորը ստիպուեցաւ Կաստիլիումը սկսուած գործը աւարտել Արրագոնիայ։ Պերեզը Փիլիպպին էն տեղը գցեց, որ ստիպուեցաւ ետ կենալ հետազօտութիւնից, բայց նա պնդում էր հրովարտակով և ուզում էր ծածկել մեղապարտի բռնութեամբ արձակուելու ամօթը։ Այլ Պերեզի ազատուելուց առաջ Ինկվիզիցիան, կամենալով օգնել Թագաւորին, մեղապարտեց նախարարին հերետիկոսութեան մէջ և սկսեց գործը նորմէկանց։ Այսպէս, կրօնք քօղ դառաւ էն գործին, որի հիմն էր արքունի դռան նախանձը։ Բարձրագոյն խորհրդարանը հրամայեց թաքուն տեղափոխել Պերեզին և նրա ընկերներից մինին դատարանի բանտը։ Այս հրամանը հանդիպեցաւ սաստիկ ընդդիմութեան Սօնաստուցիայի բանտի իշխանութեան կողմից, որ պահանջում էր գեներալ-Իւստիցիարիայի հրամանը այս մասին։ Վերջապէս Ինկվիզիթօրները իրանց կամքը կատարել տուին և Պերեզը պատրաստւում էր գնալ Ինկվիզիցիայի բանտը։ Յանկարծ Սարրագոսի ազնուականաց բազմութիւնը, որ չէր ուզում տեսնել իրանց ֆուէրօյի ոտնակոխ լինելը, ոտի կանգնեցրուց ժողովրդին և ինկյն ամէն կողմից լսուեցան ձայներ՝ ,, դատաձանութիւն, կեցցէ ազգը․ կեցցէ ֆուէրօ, մահ չարագործներին․,, Ժողովրդաւոր մարդիկ վազեցին փոխ-Արքայի վրայ և սպանեցին նրան։ Էն վայրկենումը ուրիշ զինավառեալ բազմութիւն կրակ գցեց Ինկվիզիցիայի տունը և խռովութիւնը հանդարտեցաւ միայն էն ժամանակ, երբոր Պերեզին վերադարձրին Սօնաստուցիայի բանտը։

Ինկվիզիթօրները էնդրով աւելի նեղն էին, որ չկարացին նրան բանտը գցել․ բայց սովոր չլինելով բանը անվերջ թողնել, սարքեցին ժողով իրաւագէտներից և հրամայեցին վերաքննել գործը և յայտնել իրանց կարծիքը։ Այս փաստաբանները Թագաւորից և Ինկվիզիցիայից կաշառած, յայտնեցին իրանց կարծիքը՝ թէ Ինկվիզիթօրները յիրաւի իրանց իշխանութեան սահմանից դուրս են եկել, և Թագաւորութեան արտօնութիւնը քանդել են, որը որ կարօղ են անել միայն Թագաւորը և փոխանորդաց ժողովները․ բայց եթէ նրանք պահանջէին մեծ Իւստիցիարիայից մեղապարտին յետ տալ և արտօնութիւնը դադրեցնել Ինկվիզիցիայի գործառնութեան ժամանակը և մինչև վերջը, էն ժամանակը կարելի է յետ տալ բանտարկեալին և Թագաւորութեան իրաւունքները էսուրից ոչինչ վնաս չեն կրել։

Պերճեցի բարեկամները ասում էին, թէ արտօնութեան դադրեցնելը միևնոյն է նշանակում, թէ ոչնչացնել, և էս առանց դժուարութեան հաստատեցին։ Այնու ամենայնիւ արքունի դրան քուները և Ինկվիզիթօրները յաղթեցին և ծածուկ սարքեցին Պերճեցի յետ տալը։ Դատարանը մտցրուց Սարրագոսի մէջ շատ ծառաներ և աւելի քան 3000 զինուոր. բայց էն ժամանակ, երբ մեղապարտին հանում էին Կօնստիտուցիայի բանտից դատարանին յանձնելու համար, քաղաքի բնակիչները դիմեցին զինուորների վրայ, մեծ մասը սպանեցին, մնացածներին փախցրին, նմանապէս և կաշառած դատաւորներին, և Պերեցին ազատեցին Ինկվիզիցիայի ձեռից. նա փախաւ Ֆրանսիա։

Այս գործը, որ ցոյց է տալի, թէ Արրագոնացիք ինչքան ատում էին Փիլիպպ Բ-ի բռնակալութիւնը և Ինկվիզիցիայի կատաղութիւնը, Սարրագոսի բնակչաց համար մահաբեր եղաւ. Նրա վրայ եկկոյն տիրեցին Թագաւորը և Ինկվիզիցիան, էշաֆօթները և փայտակոյտները փչացրին ժողովրդեան ամենըրորդ մասը, որոնց յանցանքը միայն էն էր, որ ուզում էին պահպանել իրանց իրաւունքը։ Համարեա թէ բոլոր Սարրագոսի ազնուականները զոհ դառան Փիլիպպի կատաղութեանը։ Պերեցի պատկերը այրեցին, մեծ Իւստիցիարիայի գլուխը կտրեցին։ Այս էն աստիճանաւորն էր, որ Թագաւորի երդում անելից առաջ ասաց նրան իրա ազգի կողմից՝ «
„ Մենք՝ ձեզ հաւասարներս և ձեզանից բարձրերս՝ ձեզի ընտրում
„ ենք մեզ համար Թագաւոր, էն պայմանաւ, որ դուք պատուէք
„ մեր Ֆուէրօս. իսկ եթէ դուք չէք, մենք էլ չէք։„ Փիլիպպ Բ-ը յանդգնութեամբ ոտի տակ առաւ արտօնութիւնները և չամաչեց իրա զօրքի զէնքերը թաց անել իրա հպատակաց արիւնովը։

Արրագոնացւոց ապստամբութիւնը դառաւ վաղուց սպասած պատճառ Թագաւորութեան մեծ Իւստիցիարիայի անմիջական իշխանութիւնը և բոլոր առաջուայ Կօնստիտուցիայի Ֆուէրօները ոչնչացնելու, որոնք սահմանափակում էին Թագաւորի իշխանութիւնը։ Փիլիպպ Բ-ը ուզում էր Արրագոնիային ինքնակալ Թագաւորել, և Ինկվիզիցիան օգնեց նրա էս նպատակին։

Այս գործումը, որ ցոյց տուեց, թէ ինչքան մեծ էր Ինկվիզիցիայի Փիլիպպ Բ-ին ցոյց տուած օգնութիւնը, ամենից աւելի յիշատակաց արժանի է էն, թէ Փիլիպպ Բ-ը ոչ միայն վերակենդանեց Պերեցի և այս մէջոցի բոլոր զոհերի պատիւը, այլ և հրա-

արատի հանեց ,, Թէ Պերեցի գործումը մէջ որ արքութեան դէմ ,, յանցաւոր չէ, և նա հաւատում է Թէ ամենայն որ հանարել ,, է իւր անձը պաշտպան արքունի իրաւանց։,,

Կիրօգայ ԺԱ ընդհանուր - Խնկվիզիթօրը, բազմաշխատ մասնակից այս վերոյգրեալ անցքերումը, մեռաւ 1594 տարուոյ Նոյեմ՛ 20 ին։ Նրա ժամանակումը կենդանւոյն էրուեցան 2816 անձինք, պատկերներով 1408, զանազան պատիժների դատապարտուեցան 14080. բոլորի Գումարն է 18304։

ԺԲ ընդհանուր - Խնկվիզիթօր Հերոնիմ Մանրիկ Լարայ էր որդի կարդինալ Մանրիկի, որ նոյն պաշտօնը վարեց Կարլ Ե կայսեր ժամանակը։ Պատմութիւնը ոչինչ չէ տալիս նորա 10 տարուայ կառավարութեան վրայ։ 1595 տարումը նրան յաջորդեց Պետր Պօրտօ - Կարրէրօյ և շուտով պապի հրամանաւ քաշուեցաւ Կուէնցի վանքը։ Նրա ժամանակումը, այն է 1598 տարումը, մեռաւ Փիլիպպ Բը։

Թագաւորի մահը Սեւիլլային, որ միշտ գերազանցում էր զարդարանքով, տուեց երեւելի և հաղուագիւտ միջոց ցոյց տալ բոլոր իւր պերճութիւնը Թաղման հանդիսումը, որ կարգել էր Փիլիպպ Գը։ Քաղաքական կառավարութիւնը հրամայեց կանգնեցնել, որքան կարելի է երեւակայել, մեծ և Թանկագին դամբարան։ Նոյեմբերի 21 ին սկսեցին Թաղման նախապատրաստութիւնները ՚ի ներկայութեան Խնկվիզիցիայի ատեճանաւորների և անդամների. Միւս օրը հանդիսաւոր պատարագ մատուցին. բայց հէնց պատարագի սկզբումը մեծ կռիւ բաց եղաւ ատեանի և Խնկվիզիցիայի պաշտօնատարաց խմբերի մէջ սև մահուտով ծածկած ունկնդրութեան նախագահի (պրէզիդէնտ աուդիէնցիայի) աԹոռի համար։ Նա էդ. իրաւունքը ոչոքի չէր տալի, և էստորից սկսաւ կռիւը. երկու կողմն էլ տաքացան. ծայրագոյն Տրիբունալը մտիկ չտալով ոչ տեղին, ոչ հանդէսին և ոչ հանդէսի առարկային, հակառակորդների վրա այնպիսի սաստիկ բանադրանաց շանթ արձակեց, որ պատարագիչ քահանան ստիպուեցաւ բեմից վէր գալ և պատարագը աւարտել խորանումը. երկու տաքացած խմբերը սաստիկ վիճում էին և ուժով մէկ մէկի վրայ էին յարձակւում։ Ռամկալի և գայթակղեցուցիչ տեսարանը տեւեց գրեթէ ողջ օրը. վերջապէս Մարքէզ Գուզմանը հնարք գտաւ հանդարտեցնել կռուողներին. Խնկվիզիթօրները համաձայնեցան ետ տանել իրանց

նդովքը. Նախագահը թողեց իր պաշտօնը և քաղաքական խորհրդարանը հանդէպ ուրիշ ժամանակի թողեց, մինչև որ թագաւորը վճռեց գործը, որ ամէն մարդ իրան պաշտպանէ կանոնադրութեան համաձայն առանց ուրիշին վնասելու։ Թէպէտ մեծ ջանքով երկու կողմն էլ առաջ էին քշում իրանց գործը, այնու ամենայնիւ Փիլիպպ Գ-ի վճիռը դրուեցաւ միայն Դեկտեմբերի վերջումը և դամբարանը կանգնած էր տեղումը ամբողջ հինգ շաբաթ էնպէս, որ բոլոր Նիդերլանդի բնակիչները ձանձրացել էին էս փառաւոր հանդէսից։

Օտարերկրեայ և չափազանցական խստակցութիւնները, որոնք գործածուեցան էս հանդէսումը, Սերվանտէսի վառվռուն երևակայութեանը տուին կերակուր. Նա գրեց էն երևելի երգը, որի մէջ այնքան նուրբ ծաղր է անում էս վէճի երեխայական կողմը, մինչև որ հեղնութիւնը երևում է անճշմարտանման. և Նա չազատուեցաւ Ինկվիզիցիօնների հետազօտութիւնից, որոնք հրաման չէին տալի ուշալի իրանց ծաղր անել այսպիսի վէհ գործի մէջ։

Փիլիպպ Բ-ի թագաւորութիւնը Ինկվիզիցիայի պատմութեան ամէնից աւելի արիւնաթաթախ ժամանակն էր. ծայրագոյն անբռնակալը յանդգնում էր գործել չլսուած անգթութիւններ, և էս ժամանակումը Փիլիպպ Բ-ի ժամանակակից Ֆրանսիայ թագաւոր Կարլ Թ-ը ամենից գերազանցեց մին օրումը։ Նա հրամայեց 1572 տարումը սուրբ Բարդուղիմէոսի տօնի գիշերը սպանութեան ձեռք տալ և ինքը դառաւ զլուելի սպանութեան տեսարանների կատարիչ։

# ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ:

## Փիլիպպ Գ-ի Թագաւորութիւնը:

Փիլիպպ Բ-ի չորրորդ կնկանից ծնած Փիլիպպ Գ. որդին իրա հօր աթոռը ժառանգեց 1598 տարուայ վերջումը: Նրա անդեամը մոլիկ տալով, նա աւելի ընդունակ էր երևում սուրբ Դոմինիկի վեղար ծածկել, քան թէ այնպիսի ընդարձակ տէրութիւն կառավարել: Այս ժամանակը Ինկվիզիցիան էնքան զարհուրելի և հզօր էր, որքան որ Ալդեցի կարգադրութեան ժամանակն էր 1561 տարումը: Նոր իշխանը, կամելով ինքը ընտրել գեներալ-ինկվիզիթօր, բանի տեղ չըդրեց Կլէմենտ Ը-ի կոնդակը, որով հրամայում էր ամէն եպիսկոպոսներին մնալ իրանց վիճակումը, և էնդրով ստիպում էր գեներալ-ինկվիզիթօր Պորտո Կարրէրոյ գնալ իրա Կուէնցայ վիճակը. Նա կարգեց իրա յաջորդ Դօն Ֆէրդինանդ Նինիօ դէ-Գուէվարայ կարդինալին, որ յետոյ դառաւ Սևիլլիոյ Արք եպիսկոպոս:

Այս Փ. Գ. գեներալ-ինկվիզիթօրի ծառայութիւնը երկարատև չ'էլաւ, և ոչինչ երևելի բան ցոյց չէ տալի, բաց 'ի մի քանի եկեղեցական վէճերից, որոնք ծագեցան Ալկալէի Եզուիտների և մի քանի Իսպանիական հոգևորականների մէջ դաշի համար. այսինքն բաց էլաւ մի հարցում, թէ արդեօք Կլէմենտ Ը-ը իսկական յաջորդ է Յիսուսի Քրիստոսի: Ինկվիզիթօրներն էլ էս վէճի մէջ մտան, խելքերը տաքացան, և 'ի հարկէ առանց մի գայթակղութեան չէր անց կենալ, եթէ Պապը հրաման չըգրէր գեներալ—ինկվիզիթօրին արգելել բոլոր այսպիսի վէճերը: Այս բանի համար պապը և թագաւորը Նինիօյին պաշտօնից զրկեցին 1609 տարուայ սկզբումը երեք տարուայ ծառայութիւնից յետոյ, որոնց միջոցումը ծայրագոյն դատարանը դատապարտեց կենդանւոյն էրուելու 240 մարդ և 96 պատկերներով. 1728 տարաբաղդներ մատնուեցան զանազան պատիժների և կայքերից զրկուելու.

բոլորը 2064 զոհեր. ուրեմն Աւտօ-դա-Ֆէ կատարւում էր էլի էնպէս շուտ շուտ, ինչպէս Փիլիպպ Բ-ի ժամանակը։

Նրանից յաջորդեց Դոն Խուան Ցունիգայ Խաչակրաց պատերազմի առաքելական գեներալ—Կոմիսարը և Կարթագենիայ եպիսկոպոսը։ Նա մին քանի ամսից յետոյ մեռաւ, բայց այնու ամենայնիւ վրայ հասցրուց այրել տալ կենդանւոյն 804 հերետիկոս և 32 տարաբաղդների ոսկորներ, որոնք մեռել էին դատարանի բանտում, և 576 հոգի էլ դատապարտուեցան մշակութեան և բանտի, և բոլորը զրկուեցան կայքից. ընդ ամէնը 688 զոհ։

Ցունիգի տեղը յաջորդեց Դոն Խուան Բապտիստա Ացէբէդօ հաւատների կողմերի Արքեպիսկոպոս, Կաստիլեայ խորհրդարանի նախագահը, Հնդկաստանի պատրիարքը և Խաչակրաց պատերազմի առաքելական գեներալ—կոմիսարը։ Այս Ք. Օ. գեներալ—Ինկվիզիթօրը պապից հաստատուեցաւ այս աստիճանում 1603 տարուայ սկզբում և կառավարեց մինչև 1607 տարին, և էն տարում մեռաւ։ Նրա հինգ տարուայ ծառայութեան միջոցում տէրութեան տան և վեց Ինկվիզիցիաները այրեցին 400 մարդ կենդանւոյն, 116 պատկերներով, 2880 դատապարտուեցան զանազան պատիժների, բոլորը 3440 զոհ։

Տօլէդօյի Կարդինալ-Արքեպիսկոպոս և սրբունի խորհրդական Դոն Բեռնարդ Դէ-Սանդօվալ-ի Ռօխաս Ք. Ն. գեներալ-Ինկվիզիթօրը ստացաւ պապից կոնդակ 1608 տարուայ սեպտեմբերի 12 ին։ Էս ժամանակում Փիլիպպ Գ-ը Մադրիտում կորտեսս (ծո-[illegible]) ժողովեց, և չէր արձակում ամբողջ տարի։

Որովհետև Ինկվիզիթօրների լպստածութիւնը օրից օր մեծանում էր, և անդադար ահ և երկիւղ էր տարածում, լքցնելով բանտերը, շատ զոհեր դատապարտելով զանազան պատիժների և անարգանաց տակ գցելով նրանց սերունդները, էնդուր համար փոխանորդները վստահացան թագաւորին խնդիր տալ հետևեալ մըտքով։ 1579 և 1586 տարում նրանք խնդրել էին սահմանափակել Ինկվիզիցիայի դատարանի չարագործութիւնները, սահման դընել զարհուրելի և խիստ շուտ շուտ գործ ածած պատիժներին, որոնք Ինկվիզիթօրները սահմանում էին այնպիսի յանցանքների համար, որոնք շատ անգամ հերետիկոսութեան հետ իսկի կապակցութիւն չունէին. Փիլիպպ Գ-ը խօստացաւ թեթևացնել էս չարութիւնները, որոնց վրայ ամէնքը շատ անգամ գանգատ էին ա-

ըսել, բայց չըկարողացաւ խօստումը կատարել, էնդուր որ մահը վրայ հասաւ։ Այժմ փոխանորդները վստահացան յառաջարկել նոյն խնդիրը, էնդուր որ անկարգութիւնը աւելցել էր և ժամանակը հասել էր արգելել հերետիկոսութեան չըմեղապարտուած անձանց բռնուիլը և ծածուկ բանտերը դցուիլը. թէ Իսպանիացւոց մեծ մասը չըգիտելով բանտարկելութեան պատճառները, ամէն բռնուածներին համարում են հերետիկոս և այս նախապաշարումը Ինկվիզիցիայից դատապարտածներին զրկում է ամուսնանալու իրաւունքից, իբրև բարի անունից զրկուածների. էնդուր համար օրէնքի մէջ մըտած մեծ խառնակնութեան առաջքը առնելու համար, անշուշտ հարկաւոր է օրինադրել, որ հերետիկոսութիւնից դուրս ուրիշ յանցանքի համար մեղապարտները արգելուին ուրիշ բանտերում և էնտեղ սպասեն դատաստանի։

Փիլիպպ Գ-ը պատասխան տուեց Կօրտէսներին, թէ գործ կըդնէ ամենատեսակ միջոցներ նրանց գանգատներին բաւականութիւն տալու. բայց այս խօստումը մնաց առանց ոչինչ կատարման. գըլխաւոր խորհրդարանի պաշտօնները շարունակում էին առաջւայ պէս։

Հետեւեալ տարումը Վալէնցիայ եպիսկոպոս Դօն Ժուան Ռիբէրա առաջարկեց Փիլիպպ Գ-ին, թէ հնար չըկայ Վալէնցիայ Մօրիսկներին բոլորովին քրիստոնէութեան դարձնելու, որովհետեւ նըրանք խիստ կամակորութեամբ անձնատուր են իրանց մոլորութեանը. թէ նրանց երկրագործութեան և արհեստների մէջ յաջողակութիւնը ճշմարտապէս սոսկում է կասկածել, թէ նրանք մին ժամանակ կարող են շփոթել Ալժիրցւոց, Մաւրերի և ուրիշ Աֆրիկեան ազգերի կառավարչական խաղաղութիւնը, որոնց հետ նրանք ունին հաստատ կապակցութիւն և ամէնօրեայ յարակցութիւն. և էս պատճառաւ Արքեպիսկոպոսը համարձակւում է առաջարկել Թագաւորին նրանց բոլորովին Թագաւորութիւնից դուրս անել խաղաղութիւնը և հասարակ մաքրութիւնը պահպանելու համար։

Փիլիպպը ընդունեց խնդիրը մտիկ տալու համար, շուտով հաւաքեց սրբունի խորհրդարան նախագահութեամբ գենէրալ - Ինկվիզիտօր Սանդօվալի, և հրամայեց իրանց կարծիքը յայտնել։ Իսպանիայ ազնուականները, որոնք ունէին Մաւրերից շատ վասալներ (ադնի-), առաջարկեցին Թագաւորին և սրբունի խորհրդարանին բոլոր չարիքը, որոնք կարող են առաջ գալ այս ճանապարհը բռնելից, այսինքն՝ այն չարիքը, որոնք կըծագէին նրանց զօրութեան և հա-

բռնութեան նեցուկ ուրեմն և օգտակար հպատակներին հեռացնե-լէց: Այս էլ աւելցրին, թէ էս պահանջի կատարումը կըզրկեցնէ երկրագործաց և բնակչաց մեծ բազմութիւնը: Բայց 'ի սրանցից ազնուականները հաստատում էին, թէ արքեպիսկոպոսի առաջար-կութիւնը չափազանցեալ է հաւատոյ մասին, ենդուր որ ծայրա-գոյն խորհրդարանը հերետիկոսութեան մէջ ընկած Մօրիսկներին երբէք անպատիժ չի թողել, եթէ գտնում էր նրանց վրա լրտես-ների մատնութեամբը, որոնք միշտ պարապում են յանցաւորներ գտնելու:

Ինկվիզիթօրները իրանց կողմից այնքան սաստութիւններ բանեց-րին բարձրագոյն դրանը և ծայրագոյն խորհրդարանումը, որ վեր-ջապէս հասան Մաւրերին բոլորովին դուրս անելու նպատակին: Ամենից աւելի այս միտքը երախտապարտ է ընդհանրալ - Ինկվիզի-թօրին, որ ամենից առաջ ձայն տուեց և կասկածաւոր ցոյց տուեց իւր կարծիքին բոլոր հակառակողներին, և վերջապէս դատաստանի տակ դցեց Ներսոզ Օսսունային: Փիլիպպը ստորագրեց և հրամայեց կատարել Մաւրերի աքսորանաց անիրաւ և բոլոր պօլիտիկի հակա-ռակ հրովարտակը: Վալենցիոյ և ուրիշ նահանգների Մօրիսկները պարտաւորուեցան դուրս գնալ մինչև 1610 տարուայ յունվարի 10ը: Նոյպիսի հալածանքը, որի մէջ գլխաւոր գործակից էր Ինկվիզի-ցիան, միանգամ խլեց Իսպանիայից և Եւրոպայից միլիոնից ա-ւելի օգտակար և աշխատասէր բնակիչներ, որոնք գաղթեցին Ափրի-կէայ: Թէպէտ Փրանսիան կանչում էր նրանց իւր անապատները շէնացնելու, և Հենրիկ Դ-ը պահանջում էր Մօրիսկներից մի-այն կաթոլիկութիւն ընդունել, բայց նրանք չըհամարձակուեցան համաձայնել էդ հրաւէրքին և էնդրում էն հալածանաց տակ ընկ-նել, որոնց տակ ընկած էին իրանց հայրենիքումը. և այսպէս էն անապատները, որոնք պտղաբեր էին լինում այս շինականաց աշ-խատութեամբը, մինչև էս օր էլ մնում են անգործ:

Դեռ ևս 1507 և 1527 տարիներումը Ինկվիզիցիան դա-տապարտեց մեծ բազմութիւն կախարդների, որոնց դատը ցոյց է տալիս ամբողջ շարք տգիտութեանց և յիմարութեանց, որք այն-քան ծիծաղելի են ԺԹ. դարու ընթերցողաց համար, որ հազիւ թէ կարելի կըլինէր հաւատալ այսպիսի դատաստանի, եթէ որ Փրան-սիան այս շրջանումը ինքն էլ ցոյց չըտար մեզ մի և նոյն տեսա-րանը և եթէ մնացած չըլինէին շատ շարադրութիւններ, որոնք լիքն

են կախարդական ուսմանը։

1610 թուումը կախարդներին այրում կամ հալածում էին Լոգրոնիօումը, որ Ռօստոնից դաշտումն է. Այերի և Ցուգարամուրդի համարեա թէ բոլոր բնակիչները խառնուած էին էս գործի մէջը, որ մի բառ մինչէ գրած է այս գրքի վեցերորդ մասի մէջ. այս յանցաւորներից 11 հոգի այրուեցան, 19 ենթարկեցան զանազան ապաշխարանքների և նրանց պատկերները էրուեցան նոյն աֆտօ—դա-ֆէ հանդէսումը։

Ինկվիզիցիայի խորհրդարանը, որին ներկայացրել էին այս գործը, երկար ժամանակ չէր տալի իւր վճիռը։ Բայց նրանից յետոյ իսկոյն հրաման դրեց Ինկվիզիտօրներին պահպանել ամէն տեսակ զգուշութիւն վկաներին փորձելու, խոստովանելու և մեղադրեալների ցուցման ժամանակը։ Այս հնարքները չանցան առանց օգտի. նրանք պակասցրին կախարդներին փնտրելու և հետազօտելու եռանդը, նմանապէս պակասցրին հմայութեան ուժը։ Այն շրջանումը այսպիսի աֆտօ-դա-ֆէ էլ չէին կատարում. քանի որ լուսաւորութիւնը առաջ էր գնում, այնքան սակաւ առ սակաւ պակասում էր կախարդների և փորձողի մարդկանց թիւը, որոնք հաւատում էին նրանց դէւը տալուն։ Վերջապէս սկսան հասկանալ, թէ էն արհեստը, որ կոչւում է կախարդութիւն, բնական երևոյթներ է ցոյց տալի, թէ նրա միւս գործերը են կարծիքական և խաբէական։ Այժմ կախարդները կորել են թէև կան շատ խաբեբաներ և հոգետեսներ։

Կախարդների հալածանքից մին տարի յետոյ Կօրտէսները կրկին ժողովեցան և կրկին խնդրեցին Թագաւորից վերջացնել ծայրագոյն դատարանի չարագործութիւնները. բայց էս խնդիրքն էլ առաջուաններից աւելի յաջող չելաւ. Ինկվիզիցեան լռիկ և հանդարտ շարունակում էր իւր բռնած զարհուրելի ճամբան։

Գեներալ-Ինկվիզիտօր Սանդօվալը, որ շատ բանով գործակից էր կախարդների հալածմանը, մեռաւ 1618 թուումը։ Նրա երկար ժամանակեայ կառավարութեան միջոցումը այրուեցան կենդանւոյն 880 հերետիկոսներ, կախարդներ ևայլն, 360 պատկերներով, 6336 հոգի մատնուեցան զանազան ապաշխարանքների։

Սանդօվալին յաջորդեց Ֆրանցիսկ Լուդովիկ Ալի-Ագայ, Դոմինիկեան կարգից Փիլիպպ Գ-ի խոստովանահայրը, որ անչափ սիրելի էր նրան, թէ և ոչ երկար ժամանակ. ենդուր որ իսկոյն

Փիլիպպի մահից յետոյ Ալէ — Ագան ոչ միայն զրկուեցաւ իրա պաշտօնից, այլ և ազատութիւնից էլ։ Այնու ամենայնիւ նրա համարեա թէ երեք տարուայ ծառայութեան միջոցումը բարձրագոյն խորհրդարանը դատապարտեց 2064 մարդ, որոնցից 240ը այրուեցան կենդանւոյն, 96ը պատկերներով, իսկ 1728ը կայքերը խլելեց յետոյ աքսորուեցան մշակութեան։

Փիլիպպ Գ-ը մեռաւ 1621 տարուայ սկզբումը ,քանիերեք տարի թագաւորելից յետոյ, շարունակաբար պաշտպանելով ծայրագոյն դատարանը տէրութեան կործանների պահանջմունքներից և ժողովրդեան ատելութիւնից։ Նրա ժամանակը կային հինգ ընդհանուր — ինկվիզիթօրներ և տասն և վեց դատարան միայն Իսպանիումը. դատապարտուեցան 13243 մարդ, որոնցից 1840ը այրուեցան կենդանւոյն և 692ը պատկերներով.

# ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

## Փիլիպպ Դ-ի Թագաւորութիւնը։

Փիլիպպ Դ-ը գահը նստաւ 1621 տարուայ Մայիսի 31 ին և իսկոյն ընդհանուր-ինկվիզիթօր Ալի - Ագային հրամայեց հրաժարուել իրա պաշտօնից, և յանձնեց էս պաշտօնը աքքունի խորհրդական և Արքեպիսկոպոս Անդրէյ Պաչեկօյ։ Ինկվիզիցեան ինչպէս սովոր էր, կամենալով թագաւորի դահակալութեան օրը տօնել, ներկայացրուց նրան Աւտօ - դա - ֆէ ժամանակը անցեալ ժամանակների երևելի կեղծաւոր Մարիանի զղջման տեսարանը։ Այս կինը առաջ շատերին խաբում էր տեսիլքներով, կեղծաւորական սրբութիւնով, քաջքերի հետ շուտ շուտ տեսնուելով և անթիւ քաղաք ընկնելովը։ Վերջապէս իրա գլուխը տուեց անսանձ անառակութիւնի։ Նրան մեղադրում էին չար հոգիների հետ կապակցութիւն ու-

նենալումը , ամենայն պատերազմների հերոսականութեան մէջ , նե-թապաշտութեան և անաստուածութեան մէջ ։ Նրան ներկայացրին Աֆիտօ-դա-ֆի ժամանակը պատանած, գլխին դդալ դրած և դունչը կապած ։ Պռօհիճները նրան երկու հարիւր մահուան մտրակ տուին, յետոյ դրին մշտնջենական բանտը ։

Պախեկօ հէնց որ մտաւ իւր պաշտօնը , իսկոյն ամբաստանեց իւր նախորդ Ալէ-Ագայէն , մեղադրանելով նրան նիւթապաշտութեան և լուտերականութեան մէջ ։ Պապը չը մերժեցաւ , ենդուր որ հրաժարեալ Ինկվիզիթօրը մեռաւ դործի շարունակած ժամանակը ։ Երևի, թէ Պախեկօ մին առանձնութիւն ունէր թագաւորին խաբելու համար, որ Ալէ-Ագայէն այսպիսի քննութեան տակ դցեց ․ բայց որովհետև սա ինքն էլ իւր կենաց մէջ մութ, հաւատադրուժ և քսութիւն սիրող մարդ էր, ենդուր համար էլ մեղք չը ցաւեցաւ նրա համար ։

Թէև Ինկվիզիթօրները Պախեկօ կառավարութեան ժամանակը բարեպատեհ պատահմունք չ՚ունեցան իրանց նախորդների պէս անգթութիւններ ցոյց տալու, բայց դոնէ նրանց յանդգնութիւնից անց կացան ։ 1622 տարումը Մուրցիայի Ինկվիզիթօրները վէճ բացարին Լօրկի դատաւորի հետ, և չ՚կարելով նրան բանտը դնել Մուրցիայի Կօրրէջիդօրի անհամաձայնութեան պատճառաւ, բանադրեցին եպիսկոպոսին և բոլոր քաղաքի եկեղեցիների վրա արգելք դրին ։ Եպիսկոպոսը հրովարտակ գրեց ժողովուրդին , յայտնելով , թէ պարտաւոր չեն հնազանդել բանադրանքին ։ Էն ժամանակը Ինկվիզիթօրները գցեցին նրան մեծ դրամական տուգանքի տակ , և հրամայեցին գնալ Մադրիտ և ներկայանալ ընդհանուր-Ինկվիզիթօրին ։ Մուրցիայի շատ կանոնիկներ և մին քանի ծխատէր քահանայք գցուեցան բարձրագոյն դատարանի բանտերի մէջ ։ Թագաւորը և պապը խառնուեցան էս բանի մէջ դայթակղութիւնը դադրեցնելու համար, և եպիսկոպոսին ետ տուին իւր բոլոր իրաւունքները ․ բայց արդարադատութիւնը չը վերջացրուց չարութեան պատճառը , որից գանգատաւոր էին ։

Նոյն տարումը Տօլէդօյի Ինկվիզիթօրները բանադրեցին քաղաքի նախարարին, որ հրամայել էր բռնել և դատաստանի տակ գցել մին մասնաճառի քաշումը պակաս ծախելու համար ։ Այս մասնաճառը բարձրագոյն խորհրդարանին մօտ էր տալի և ենդուր համար ազատ էր ամենայն հետաքօտութիւնից ։ Պարզակ բանը

մեծ բան դարձաւ Ինկվիզիթօրների յանդգնութեամբ. Ժողովուրդն էլ խառնուեցաւ էս բանումը և կանգնեցաւ Ինկվիզիցիայի դէմ: Այս շփոթը հանդարտեցրին միայն էն ժամանակ, երբ Թագաւորը նշանակեց առանձին ժողով Թագաւորի իրաւունքները պաշտպանելու համար. Այս հնարքը միայն վայրկենական օգուտ բերեց. էնգուր որ միւս տարին Գրենադի բարձրագոյն դատարանը իրա կրից նոր չափազանց յարձակմանցը հետեւեցաւ: Նա բանադրեց դատաւորին և արքունի պրօկուրօրին երկու գերագանց շարադրութեանց համար, որոնց մէջ նրանք պաշտպանել էին Թագաւորական օրինաց իրաւունքը Ինկվիզիցիայի չարագործութեանց դէմ: Այս չարութիւնը խափանելու համար սարքուեցաւ ժողով դահակցութեան (դէ-կօմպէտանս), որոյ պարտաւորութիւնն էր վճռել Ինկվիզիցիայի և քաղաքական ատեանաւորների մէջ ելած բոլոր երկբայութիւնները. բայց Ինկվիզիթօրները չուզեցին խափանել ժողովը:

Երբ որ էս անցքերը գործւում էին Մուրսիումը, Գրենադումը և համարեա թէ Թագաւորութեան բոլոր քաղաքներումը, Պախէկօ հրամայեց հետամուտ լինել Մադրիտումը կոչ. Մի դատախազակ կամ Ֆրանկօյին: Ֆրանկօն գրել էր մին քանի կառավարութեան վերաբերեալ գրուածներ, որոնց մէջ պաշտպանում էր Թագաւորների իրաւունքները և անկախութիւնը պապի ապօրինի պահանջմանց դէմ, հռովմէական դահի չարութեանց դէմ, հոգևոր դատաւորաց և բարձրագոյն դատարանի դէմ: Այս գրուածները ընկան ձեռները — Ինկվիզիթօրի հալածանաց տակ, և եթէ Ֆիլիպպ Ե-ը չառնէր հեղինակին իրա պաշտպանութեան տակ, Ֆրանկօն անպատճառ կըբռնուէր և կըգցուէր դատարանի ծածուկ բանտը: Պախէկօյի կառավարութեան վախճանը պատկուեցաւ ընդհանուր աֆտօ-դա-ֆէ, որ տօնուեցաւ Կորդովումը, ուր էրուեցան դատապարտեալների պատկերները, չըհամարելով 11 ողջակեզների ոսկորները, որոնք մեռած էին աղքատութեան և յուսահատութեան վէշտերի մէջ կամ բանտերումը: Պախէկօն մեռաւ 1726 տարուայ Մայիսի 7 ին. չորս տարի նա կառավարեց բարձրագոյն դատարանը և կրակի մատնեց կենդանւոյն 256 մարդ, 128 պատկերներով և 1280 զանազան պատիժների. բոլորը 1664 գոհ.

Նրան յաջորդեց Հնդկաստանի Բուրգոսեան Արքեպիսկոպոս կարդինալ Անտոնի Զապատայ է Մենդօզայ, որ մտաւ պաշտօնէ մէջ 1627ի սկզբումը. Էն ժամանակից յետոյ Մադրիտի բարձ-

րագոյն դատարանը սկսեց մի գործ, որ որքան վսեմ, էնքան էլ ծաղրական էր։ Երեսուն կուսանք, որոնք յայտնի էին իրանց մաքուր բարոյականութը, բնակւում էին քաղաքի մէկ երևելի վանքում։ Յանկարծ նրանցից մեծ մասը սոսդյան զարհուրելի դրութիւն. չարութիւնը շատ տարածուեցաւ, և նրանցից 25ը մի այնպիսի անսովոր դժուարութեան մէջ ընկան, որ նրանց վտանգացնում էր անսովոր գործեր անել։ Դաշին անդամը ձայն դուրս եկաւ, թէ նրանք քաջքերից բռնուած են և նրանց խոստովանահայրը շատ անգամ գիշեր ցերեկ մնում էր նրանց վրայ հալածելու աղօթքներ կարդալով։

Ինկվիզիցիան, լսելով էս պատահարը, հրամայեց բանտը դցել խոստովանահօրը, մայրպետին և մի քանի կուսերի, որոնց մեղապարտում էին, իբրև իլլումինատ-հերետիկոսների, և բոլորը դատապարտեցան զանազան ապաշխարանքների։

Այսահարներից ազատելուց յետոյ Ինկվիզիցիան սկսեց հետազօտել իլլումինատներին, որոնց աղանդը յիրաւի զօրացաւ Իսպանիայում։ Էն ժամանակ պէտք էր տեսնել թէ նրանցից քանիսը քշուեցան աւտօ-դա-ֆէ, որ էս ժամանակը տօնուեցաւ, մանաւանդ Սևիլլիայում 1630 տարումը, ուր կենդանույն էրուեցան 12 իլլումինատ և աւելի քան 50 ապաշխարողներ համարուեցան կասկածաւոր։

Էն տարումը Յապատան հրատարակեց արգելեալ գրքերի նոր ցուցակ, որի մէջ գրած էին ոչ միայն էն բոլոր շարադրութիւնները, որոնք կասկածաւոր էին համարւում հերետիկոսութեան մէջ, այլ և Իսպանիայում տպած ուրիշ շատ գրքեր, մանաւանդ Սալգադօ և Սեղէ իրաւագէտների հրատարակածները, որոնք պաշտպանում էին քաղաքական իշխանութիւնը և արքունի դատարանը բարձրագոյն դատարանի յափշտակութեանց դէմ։

Սրանցից զատ շատ Եզուիտներ մանաւանդ Յովհան Բապտիստ Պօզա Իսպանիոյ նա և Հռովմայ Ինկվիզիցիայի համար բան ու գործ դառան իրանց շարադրութիւններով։ Պօզան պաշտպանում էր իրա ընկերաց իրաւունքները. Հռովմէական Ինկվիզիցիան դատապարտեց նրա շարադրութիւնը։ Ինկվիզիցիայի թշնամիքը ցանկանում էին, որ Իսպանիոյ Ինկվիզիցիան էլ էտ բանն անէ, բայց նրան շատ ժամանակ արգելում էր Հերցոգ Օլիվարեցին կատղացնելու երկիւղը, որ էր զօրաւոր նախանձայոյզ պաշտպան Իզօլէ աշա-

կերտներուն։ Ուրբան Ը. պապը նմանապէս կամենում էր Գալի-լէին հերետիկոս հանել. բայց մի և նոյն պատճառները թոյլ չէր-տուին նրան արգելել նրա .քարոզութիւնը. Քիչ ժամանակից յետոյ Հերցօգ Օլիվարեզը մեռաւ և էն ժամանակ իսպանիոյ ինկվիզիցիան էլ չվախեցաւ դատապարտել Յեզուիտների քարո-զութիւնը. երան Գալիլէին ստիպեցին հրաժարել իւր մտքերից, որոնք հերետիկոսական էին յայտնած. կաթօլիկական կրօնը էս բանի մէջ գայթակղեցուցիչ վէճերի միայն ծածկոց էր դառել. իսկական պատճառն էր ինկվիզիտօրների և Յեզուիտների անձնասիրութիւնը. երկու կողմն էլ էնքան տաքացան, մինչև որ աւելի պարապում էին անձնասիրու-թեամբ, քան թէ հաւատով։

Ցապատայ ծառայութեան վերջին ժամանակը լցուեցաւ նա-խադահութեան համար իւած վճռերով։ Վեց տարի կառավա-րելից յետոյ Ցապատան հրաժարեցաւ գեներալ — ինկվիզիթօրի պաշտօնից 1632 տարումը։ Նրա ժամանակը իսպանիումը կրուե-ցան կենդանույն 384 մարդ, 192 պատկերներով և 1920 մատ-նուեցան զանազան պատիժների. բոլոր 2496 հոգի։

Նրան յաջորդեց 1632 տարուայ յունիսի 17 ին Ֆր. Անտոնի Սոտոմայօր Դոմինիկեան կրօնաւոր և արքունի խոստովանահայրը. Նա ցոյց տուեց Թագաւորին մեծ ափտօ-դա-ֆէ, ուր ներկայ գտնուեցան ինքը Ֆիլիպպ Դ. իւր ընտանեօքը և բոլոր պալատովը. բայց հանդէսը այնքան շքեղ չէր. այրեցին միայն 7 հերետիկոս, որոնք դատապարտուած էին հրէութեան մէջ։ Շքեղ ափտօ-դա-ֆէ տուեցին Վալլադօլիդումը, ուր բաց 'ի կրակի մատնուած 9 տարաբաղդներից, դատարանը հնարեց նոր տեսակ պատիժ 10 հաս հրէութիւն անող հերետիկոսների վրա. այսինքն նրանց ձեռները բևեռեցին մեծ փայտեայ խաչի վրա, և էն տանջանքի մէջ նրանք պէտք էր լսէին մշտնջենական բանտարկելութեան վճիռը։ Էս հանդէսումը այրեցին նմանապէս մին կրօնաւորուհի, որ երկար ժա-մանակ իրան սուրբ էր ցոյց տալի և պարծենում էր տեսիլքներով. բայց յետոյ դուրս եկաւ կեղծաւոր և խաբեբայ։ Էս վերջինի պէս իսպանիումը շատ մարդիկ դուրս էին գալի, և նրանց խորհրդա-կից միշտ լինում էին վարդապետները։

Սոտոմայօրի կառավարութեան ժամանակը կատարուեցաւ ափ-տօ-դա-ֆէ Պերուի մայրաքաղաք Լիմումն էլ իսպանիոյ ինկվի-

զիցիայի ստորադաս դատարանի վճռով ։ Առաջինումը 1639 տարումը այրուեցան 11 մարդիկ։ Ուրիշ պատիժների մատնուածների մէջ կային երեք բանտապահներ, որոնք դատապարտուած էին բանտարկելոց վրա թոյլ մտիկ տալու համար։ Դաստուրից ջոկ Սոտոմայորի ժամանակը, ինչպէս որ նրա նախորդների ժամանակն էլ, շատ շատ վէճեր էին բացւում աշխարհական իշխանաւորների հետ մանաւանդ Տօլէդումը, Սեւիլլումը և Վալլադօլիդումը ։ Այս բոլոր վէճերը միայն տարաձայնութիւնն էին շատացնում Թագաւորութեան մէջ և դատարանի զոհերի թիւն էին աւելացնում ։

Սոտոմայորի հրաժարուելուց երկու կամ երեք տարի առաջ մի քանի պատմաբաններ կարծում են, թէ սկսուել էր ֆրան-մասօնութիւնը, որ յետոյ շատ հողի մէջ գցեց բարձրագոյն խորհրդարանը ։ Իրաւի, թէպէտ այս ժամանակը երեւում էին էս ընկերութեան մի քանի սկզբունքը, բայց ստուգագոյն ասելով այս ընկերութիւնը լոյս ընկաւ Անգլիում Կարլ Ա.ի Թագաւորութեան ժամանակը, որ եշաֆօթի վրա սպանուեցաւ 1649 տարումը ։ Ասուլի, թէ Կրօմվէլի և հասարակապետութեան թշնամիները կազմեցին Անգլիական ծածուկ ժողովների Գրօսմէյստրի (պետի) աստիճանը, որ ժողովուրդի միջը պատրաստեն միապետութիւնը վերականգնելու համար ։

Անտօնի Սոտոմայորը ստիպուեցաւ Փիլիպպ Դ.ից հրաժարուել գեներալ-ինկվիզիտօրի պաշտօնից և տասն և մի տարի իրա զարհուրելի պաշտօնը կառավարելուց յետոյ 1643 տարումը հրաժարեցաւ։ Նրա ժամանակումը կենդանոյն այրուեցան 780 մարդ, պատկերով 252, և 3520 մարդ դատապարտուեցան զանազան պատիժների, գումարն է 4,576 զոհեր։

Սոտոմայորի տեղը նստաւ Դոն Դիեգօ Արքէ ի Րէյնօզայ 1643 տարուայ սեպտեմբերի 8 ին։ Այս շրջանումը աչքից ընկաւ Հերցօգ Օլիվարեց առաջին նախարարը (մինիստր) Փիլիպպ Դ.ի, և իսկոյն Թագաւորին և Ինկվիզիցիային հասան էս վէր-ընկած մինիստրի վրա շատ գանգատներ։ Օլիվարեցին մեղադրում էին մեծամեծ քաղաքական և կրօնական յանցանքների մէջ. Ինկվիզիցիային առաջարկեցին, թէ նա հաւատում է աստղաբաշխութեան և իբրև թշնամի կաթոլիկական եկեղեցու ուզեցել է դեղել Ուրբան Ը. պապին։ Գերագոյն դատարանը սկսեց դատը. բայց որովհետև գեներալ-ինկվիզիտօր Դիեգոն շատուց Օլիվարեցից պաշտպանած

էր, ինչուր համար իւր կողմից էլ բաւական պաշտպանեց, չ՚թողալով նրա գործին ճանապարհ, էնպէս որ, մէջ ընկած մինիստրը կարող բնական մահուամբ մեռնիլ Ինկվիզիցիոյի նրան բանտարկելու հրաման տալից առաջ:

Դոն Հերոնիմ Վիլլանուեւայ Արագոնեան պրոտոնոտարիուս, այսինքն, էս թագաւորութեան աքբունի սեկրետարը, նոյնպէս ընկաւ Ինկվիզիցիոյի դատաստանի տակ Օլիվարեցի հետազօտութեան ժամանակումը, որին բարեկամ և փոխանորդ էր. սրան էլ մեղադրեցին հերետիկոսութեան մէջ, գցեցին դատարանի բանտը և տուժեցին դըջալ. բայց մեղադրողը հէնց ազատութիւն գտաւ, իսկոյն գանգատ գրեց պապին: Հռովմայ դահը վերաքննեց գործը, հրամայեց դադարեցնել դատը և հրատարակեց Վիլլանուեւին անմեղ: Այս պրոտոնոտարիուսի գործի մէջ պապը գտաւ այնքան անիրաւութիւններ և դաժան պահանջմունքներ, որ յատուկ կոնդակով յայտնեց ջեներալ - Ինկվիզիթօրին իւր անբաւականութիւնը, հրամայելով միւսանգամ ճիշտ պահպանել կանոնները և վճիռ տալիս աւելի արդարասէր լինել:

Վիլլանուեւայի գործը ցոյց է տալի, թէ Ինկվիզիցիոյի հոգին Փիլիպպ Դ-ի թագաւորութեան ժամանակը էլի էն էր, ինչպէս էր Փիլիպպ Բ-ի ժամանակը, թէ հաւատոյ դատարանը գործիք էր պալատի քաւթիւն սիրողների համար, թէ Ինկվիզիթօրները չ՚էին թողել իրանց գործերի ծուռ ծուռ ցոյց տալու կամ ճըշմարտութիւնը փոխելու ստորութիւնը, եթէ խորամանկութիւնը նրանց օգնում էր, ամենևին չըհոգալով, թէ ինչուրից ինչ դուրս կըգայ, ինչպէս տեսանք Կարրանցի և ուրիշ տարբեաղղների գործերումը: Դիենգօյի կառավարութիւնը հարուստ էր այս տեսակ գործերով: — Փիլիպպ Դ-ի թագաւորութեան վերջի գործը իլարրեց կարգը դառել Ինկվիզիթօր Պետր Արբուէին, որ սպանուեցաւ 1485 տարումը Սարագոսումը: Այժմ Ինկվիզիթօրները վստահացան իրանց ընկերին պատիւ տալ, երբոր մոռացուել էին էն պատճառները, որոնք ստիպել էին ազգին ընդդիմանալ բարբարոսոյն դատարանի սրբուելուն: Արդէն անց էին կացել վեց սերունդ, և նորը, որ բռնել էր նրանց տեղը, մանկութիւնից սնուած այնպիսի գաղափարներով, որոնք անհամաձայն էին մեր դարու մարդկանց գաղափարների հետ, ջերմեռանդութեամբ էր մտիկ տալի Ինկվիզիցիային պատկանեալ ամէն մարդու վրայ: Հարկէ էս

ժամանակը ոչ ոք չէր կարող ցրել Ինկվիզիթօրների վրա եկած յարգանքը, որ դառել էր հասարակաց, ոչ ոք չէր համարձակուել Ինկվիզիցիայի անօրէնութեանց դէմ կանգնել առանց ենթարկելու իրա անձը նրա անգութ հետապնդութեանը:

Հանդէսը, ուր համար թագաւորը և բարձրագոյն դատարանը նուէրեցին մեծ գումարներ, կատարուեցաւ 1664 տարում Ապրիլի 17 ին Ալէքսանդր Է. պապի ժամանակը:

Պիոնգօն և Փիլիպպ Դ-ը մեռան մին օրումը 1665 տարում վերջումը: Դրա անցքեր կարող էին հանձարեղ կառավարութեանը մտքը բանալ՝ ջնջել բարձրագոյն դատարանը երբէ մնասկար քաղաքականութեան և խանգարիչ թագաւորական անդորրութեան, կամ գոնէ պէտք էր նրա իշխանութիւնը դնէր նեղ սահմանների մէջ և մտցնէր հասարակ դատաստանական ձևերի մէջ, որ թաքուն ամենաջանքների բոլոր չարագործութիւնները արմատախիլ լինէին. բայց Փիլիպպ Դ-ի անհօգութիւնը չթողեց նրա մտցնել ոչ ինչ փոփոխութիւն: Պիոնգօյի կառավարութեան ժամանակը բոլոր դատապարտեալների թիւը հասաւ մինչև 9560 հոգերի. որբանցից 1472 մարդ այրուեցան կենդանույն և 736 պատկերներով:

Համարելի ամէ ցցելով դատավճիռների թիւը, որ Ինկվիզիցիան կտրել էր Քաթ. գեներալ-Ինկվիզիթօր Պալսէկոյից մինչև Պիոնգօյի մահը, այսինքն Փիլիպպ Դ-ի թագաւորութեան 45 տարուայ միջոցումը, տեսնում ենք՝ թէ 2852 մարդ այրուել են կենդանույն, 1428 պատկերներով, 14080 մատնուել են բանտարկելութեան, թիոյ ծառայութեան կամ ուրիշ պատժների կայքերը խլելով: Սրբեան Ինկվիզիցիայի զարհուրելի պատկերների գոյնը տակաւին չէր փոխուել:

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

## Կարլ Բ-ի և Փիլիպպ Ե-ի կառավարութիւնը։

Փիլիպպ Դ-ը մեռնելիս թողեց Իսպանիոյ գահի ժառանգ չորս տարեկան որդուն և նրա մայր աւստրիական Մարիա-Աննային ժամանակաւոր կառավարիչ (ռէժէնթ)։ Այս կառավարիչ թագուհին գեներալ-ինկվիզիտօր կարգեց Արագոնիոյ կարդինալ և Տօլէդօյ Արքեպիսկոպոս Դօն Պասքալին․ քիչ ժամանակից յետոյ Պասքալին դուրս գցեցին և նրա տեղը դրին գերմանացի Յեզուիտ և թագուհւոյ խոստովանահայր Յովհան Եւերարդ Նիտարդոյ։

Նիտարդօ մտաւ իւր պաշտօնը 1666 տարւոյ վերջին և երեք տարից յետոյ թագուհւի կամքով հրաժարեցաւ։ Նիտարդօ էր արիւնարբու թշնամի աւստրիական Դօն Ժուանին, որ էր Փիլիպպ Դ-ի հարճորդին և Կարլ Բ-ի եղբայր։ Նա չկարողանալով նրանից վրէժ առնել յայտնի, հրամայեց բարձրագոյն դատարանին մէջ բաց անել իրա թագաւորի եղբօր հետ և յայտնել նրան հերետիկոսութեան մէջ կասկածաւոր․ բայց պոլիտիկական հանգամանքները ստիպեցին թագուհին հրաժարել գեներալ-ինկվիզիտօրին։

Նիտարդօ նեղութեամբ թողեց գործը անվերջ, և աւելի վշտացաւ, երբոր տեսաւ, թէ իրա յաջորդը դադրեցրուց Աւստրիոյ Դօն Ժուանի վրա եղած բոլոր յարձակմունքները։ Այս կառավարութեան ժամանակը դատապարտելոց թիւը հասաւ մինչև 768 մարդիք, որոնցից 144-ը այրուեցան կենդանւոյն և 48 պատկերներով։ Ուրեմն համեմատելով ողջակէզների թիւը նախորդ ինկվիզիտօրների գործերի հետ պակսեցաւ երրորդ մասը։

Տասն և հինգերորդ գեներալ-ինկվիզիտօր նստաւ Կաստիլիոյ խորհրդարանի նախագահը և Արքեպիսկոպոս Դիեգօ Սարմիենտո Վալլադարեց։ Նրա երկար ժամանակեայ կառավարութիւնը ոչինչ երևելի գործ չէ ցոյց տալի, բայց 'ի մեծ աւտօ-դա-ֆէ, որ տօնուեցաւ Մադրիտումը 1680 տարին, ինչ ժամանակ որ կատարուեցաւ Կարլ Բ-ի հարսանեաց հանդէսը՝ բուրբոնեան Մարիայ

Լուիզայ Օրլէանի Հերցոգի դստեր և Լուդովիկ ԺԴ-ի Թոռնհետ. Նշգլ էս ժամանակումը նրան ապականուած էր և անգթութիւնը նրան սովորական բան էր դառել, որ պալատը և ինկվիզիթօրները ցանկալով հաճոյանալ նոր Թագուհիին և տալ նրան և ներկայ հանդէսին արժանաւոր պատիւ, հրամայեցին այրել աւտօ-դա-ֆէ 118 զոհերով, որոնցից մեծ մասը այրուեցան բոցերումը.

Սարմիենտօ մեռաւ 1695 տարումը իրա 26 տարուայ ծառայութեան վերջումը: Նա միջոցումը այրուեցան կենդանւոյն 948 տարաբաղդներ, 416 պատկերներով, և 4992 դատապարտուեցան զանազան պատիժների. բոլորն 6656 զոհեր.

Սարմիենտօ տեղը նստաւ Դոմինիկեան զեներալ և Վալենցեայ արքեպիսկոպոս Յովհան-Թոմաս Ռօկկաբէրտի: Սրա ժամանակումը Կարլ Բ-ը հաւաքեց ընդհանուր ժողով կանոններ հաստատել այն մեղքերի համար, որոնք լինում էին ինկվիզիթօրների և սրբունի դատաւորների մէջ: Այս մեղքերը շատ շուտ շուտ էին պատահում և շատ անկարգութիւններ էին պատճառում, որոնք միշտ ժողովըրդեան անգործութիւնը վրդովում էին և դատաստանական գործերը ուշացնում էին. Ընդհանրական ժողովը խորհրդակցութիւն կարդեց գործերը մօտեցնելու էն ճշմարտութեանց, որոնցից ինկվիզիթօրները նրան շատ շատ քաշում էին. բայց խորհրդակցութեանց բոլոր բարի դիտաւորութիւնները մնացին անկատար, ենչոր որ Ռօկկաբէրտին կարողացաւ Թագաւորի բարի միտքերը փոխել: Նա մաշեց էս բանումը ամենայն կարելի սատանութիւնները, երբեմն իրա սեպհական հնարքներովը և երբեմն Թագաւորի խոստովանահայր Ֆրօյլան Դիազայի ձեռքով, և ոչնչացրուց ընդհանրական ժողովի բոլոր աշխատանքը, որոնք կարող էին փառք և պատիւ լինել այն ժողովի ուսումնական և իրաւադէտ անդամներին. Ժողովի խորհրդակցութիւնները պարունակում էին իրանց մէջ այնքան խորին փիլիսոփայական սկզբունքներ, որ կարդալով նրանց ԺԹ դարումը չէ կարելի զգուշել դէպի ճշմարտութիւնը: Ռօկկաբէրտին, որ իրա հինգ տարուայ կառավարութիւնը գործածեց ժողովքի վճիռները քանդելու հնարքներ վճարելումը, մեռաւ 1699 տարումը 1280 մարդ դատապարտելուց յետոյ, որոնցից 240 այրուեցան կենդանւոյն և 80ը պատկերներով:

Նրանից յետոյ կարգուեցաւ Ֆէրդինանդ Վալդօմայ ի Լլէլեար, բայց պաշտօն չըմտած մեռաւ, և նրա տեղ 1699 տարուայ

Հոկտեմբերի 30ին նստաւ Ալտատարը։ Այս եղաւ Կարլ Բ-ի մեռնելուց մի քանի ամիս յետոյ, որ թագաւորեց 35 տարի։ Կարլի կառավարութիւնը, որ այնքան թոյլ էր նախկա և իրա առաջուանը, ամենևին չըպակասցրուց Ինկվիզիցիօնների լրութիւնը. Իսպանիայում և Ամերիկայում դատարանի չարագործութիւնները չքաշուեցան։

Կարլ Բ-ի ժամանակը Ինկվիզիցիայի շերտ քաջագործութիւնն էր թագաւորի խոստովանահայր Ֆրօյլան Դիասայի դէմ բաց արած վէճը, որ գրած է այս գրքի վերջումը։ Կարլ Բ-ի կենդանութեան ժամանակումը դատապարտուեցան 8704 ղաշեր, որոնցից 1632ը այրուեցան կենդանուոյն և 544ը պատկերներով, մնացածները կայքերից զրկուելեց յետոյ բանտը դըրուեցան կամ նաւարանների ծառայութեան մատնուեցան։

Կարլ Բ-ը իրանից յետոյ որդի չթողեց և Իսպանիոյ թագը 1700 տարին նոյեմբերի 1 ին ընկաւ նրա մօրեղբօրորդի բուրբոնեան Ֆիլիպպին, որ էր թոռն նրա քրոջ Մարիա — Տերեզայի և կին Գաղղիոյ թագաւորի։

Ֆիլիպպ Ե-ի գահ նստելու ժամանակը գեներալ - Ինկվիզիտօրի պաշտօնը կատարում էր Մենդօզայ։ Իսպանիոյ այդ ժամանակումը էնքան ապականուած էր, որ դաշնակցութեան տօնախմբութեան հետ կատարուեցաւ հանդիսաւոր աֆտօ - դա - ֆէ, իբրև հաճոյական ընծայ թագաւորի համար։ Ֆիլիպպը չկամեցաւ նմանիլ իրա չորս նախորդների օրինակին, որոնք իրանց անունը կաքեցին Փանատիզմով. նա չեկաւ էս բարբարոսական հանդէսը տեսնելու։ Սակայն այսպէս մարդասիրաբար սխելով նա չըզրկեց Ինկվիզիցիան իրա պաշտպանութիւնից և հաստատ մնաց իրա պապ (1) Լուդովիկ Դ-ից ստացած կանոնին, որ խորհուրդ էր տալ Իսպանիոյ նոր թագաւորին պաշտպանել Ինկվիզիցիան իբրև անհերքելի միջոց թագաւորութեան մէջ խաղաղութիւն պահպանելու համար։ Պօլիտիկական դատողութեանց մէջ եղած անհամաձայնութիւնները դատարանին նոր զօրութիւն տուին. էն ժամանակը ամէնքը զբաղուած էին մին հարցմունքով թէ Իսպանիացիք բուրբոնեան Ֆիլիպպին Ինչ տեսակ երդում պէտք է տան։ Աւստրիական տան կողմնակիցները ասում էին, թէ երդումը պար-

---

(1) Հօր հայր.

տաւորական զօրութիւն պէտք է չունենայ. մի քանի քահանաներ էլ եկեղեցւոյ բեմի վրայից քարոզում էին, թէ ներելի է օտար երկրացի Թագաւորի դէմ կանգնել.

Ինկվիզիցիան խառնուեցաւ էդ բանումը, հանեց հրաման, որ պարտաւորում էր Իսպանիացիներին մահու չափ մեղքի և մեծ բանադրանքի երկիւղով մատնել նրանց՝ որոնք խօսում են, թէ ներելի է Փիլիպպ Թագաւորի համար արած երդումը քանդել. Խոստովանահօրերուն էլ պատուիրեց խոստովանողներին հարցնել, թէ գիտե՞ն արդեօք էս հրամանը, և այնքան ժամանակ արձակում չտալ նրանց, մինչև որ հնազանդին էն հրամանին. Էս կարգադրութիւնը ճամբայ բաց արաւ շատ դատերի, որոնք բարձրագոյն դատարանը հնարեց երդմնազանցներ վնտրելու համար. սակայն էս բանումը չէին համարձակւում շատ հեռու գնալ, մանաւանդ Արագոնիումը, որի բնակիչները անդութեամբ չէին ընդունում էս միջոցը.

Մենդօզան այնքան շատ չարաչար էր գործածում իրա իշխանութիւնը, որ բարձրագոյն խորհրդարանը սկսեց էլ չհաստատել նրա վճիռները. Կատաղած ղեներով - Ինկվիզիթօրը հրամայեց բռնել և շղթաներով կապել երեք խորհրդակիցներին, որոնք ուրիշներից աւելի խօսում էին նրա հակառակ, նա և մտքումը դարնեց անխոհեմ միտք՝ Ինկվիզիցիայի խորհրդարանից խլել իրա վճռոյն պատկանեալ գործերումը խառնուելու իրաւունքը և խորհրդականներից խլել վճռողական ձայնի իրաւունքը: Ինկվիզիցիայի այսպիսի յանդգնութիւնը ստիպեց Փիլիպպ Ե ին կտրական ձեռք վերուել Մենդօզի դէմ, նա և ստիպեց նրան հրաժարուիլ պաշտօնից և Մադրիդից դուրս գնալ. Սրանից յետոյ Ինկվիզիցիայի խորհրդարանին նոր մէկանց տուեցան իրա իրաւունքները. Պապը հրամայեց իրա Նուիրակին յայտնել Թագաւորին իրա անբաւականութիւնը այսպիսի մեծ իշխանութիւնով փառաւորուած հոգևորական անձի հալածելու համար և Մենդօզի վերադարձնելը պահանջեց այնպիսի բառերով, որոնք ամենևին վայելուչ չէին Թագաւորական իշխանութեան կանոններին. բայց Փիլիպպը հաստատուն մնաց իրա վճռի վրա. և Մենդօզի տեղ կարգեց Կուէնցի եպիսկոպոս Վիդալ Մարինա, որին որ հաստատեցաւ պապից 1705 թուի մարտի 24 ին. սակայն երկար չկառարեց այս պաշտօնը. նա մեռաւ 1709 տարումը, չկարենալով մին

քանով էր երևելի լինել, բայց 'ի սպառելոյ տասն և եօթներորդ դարուն, անուանելով պաշտպան Ինկլէզներու: Փիլիպ Ե.ի ժամանակէն Մադրիտումը կար մին Ինկվիզիթոր և մին դատարան, բայց Տօլէդոէն կախեալ էր. Մեդալ Մարինա ցանկալով թեթևացնել Տօլէդոի Ինկվիզիթօրներին գործը՝ աշխատութիւնները բաժանեց: Յիրաւի էս շրջանումը մեղապարտները աւելի շատ էին, քան Անդրօղի օրօքը, Հռոմայ, Սենայի և Մադրիտի պալատներուանհամաձայնութեան պատճառաւը, և պոլիտիկական մտքերը էն ժամանակը համարւում էին յանցաւորութեան հետ հաւասար:

Մեդալին յաջորդեց Սարագոսի արքեպիսկոպոս Դօն Անտոնի Իբանիէզ Րիվայ Գերրերա: Պապը հաստատեց նրան 1709 տարուայ ապրիլին, բայց նա մեռաւ 1710 տարուայ սեպտեմբերին, թողլով իրա տեղը իտալացի կարդինալ Դօն Ֆրանցիսկ Իւդիչէ, որ կառավարեց վեց տարի, և քիչ մնաց որ բարձրագոյն դատարանը կորցնէր:

Մականայ, պրօկուրօր-Ֆիսկալը, արքայի պաշտպանելով թագաւորութեան իրաւունքը Հռոմէական դրան անտանելի յարձակմանց դէմ, ընկաւ դատաստանի տակ և դատապարտուեցաւ Ինկվիզիցիայից թագաւորի հրամանաւ գրած մին գրքի համար, և ազատուեցաւ հալածանքից միայն փախչելով: Փիլիպը գանգատեց Ինկվիզիցիայի խորհրդարանին իրա իշխանութեան վրա յարձակմանց դէմ: Օգտելով իրա անձնատիրութիւնը անսաստած և չարանալով Ինկվիզիցիայի արարմունքի վրա, Թագաւորը ուզեց կորակոծ ոչնչացնել բարձրագոյն խորհրդարանը, և արդէն 1715 թուին պատրաստեց հրովարտակը: Բրինտարա դատարանը մնում էր մահաբեր հարուածէն, բայց թագուհոյ, թագաւորի խոստովանահայր եզուիտ Դօբանտօնայի և Իւդիչէ բարեկամ կարդինալ Ալբերօնի խնդրքները դադարեցրին արհաւիրքը: Նեղութիւնը կրեց միայն Մականայը, որ կատարեալ ջերմեռանդ և անձնանուէր էր գահին. Փիլիպը առաջաւոյ պէս սկսաւ հետևել Լիւդովիկ ԺԴ.ի քաղաքականութեանը: Նոր հրովարտակը ոչնչացրուց առաջին սահմանադրութիւնները և Մականայը Իսպանիից թոյլ կառաւարութեանը մատնեցաւ:

Կարդինալ Իւդիչէ ստիպուելով էն թագաւորութիւնից հեռանալ Իտալիա, 1716 տարումը հրաժարեցաւ պաշտօնից, վեց տարի Ինկվիզիցիայի գլուխ լինելէց յետոյ: Նրա կառավարութեան ժա-

մնծակումը դատերի փոխանը եղաւ մի և նոյն, ինչպէս նրա նախոր-դի ժամանակը Փիլիպպ Ե.ի թագաւորութեան օրերումը։

Յովսէփ Մոլինէօ Հռոմից ծխնապահ զօրաց Մադրիտում 1717 թւումը Փիլիպպ Ե.ից բարձրացաւ գեներալ-ինկվիզիթորի աստիճան, բայց պատերազմի ժամանակումը Աւստրիացիներից գե-րի բռնուեցաւ և մեռաւ Միլանումը։ Խուանից Ինկվիզիցիան մնաց անգլուխ մինչև 1720 թիւը. էն ժամանակը Փիլիպպը յանձնեց գեներալ-ինկվիզիթորի պաշտօնը ծայրագոյն խորհրդարանի անդամ Յովսէփ Գարպիտէյոյին, որ շուտով մեռաւ, թողնելով իրա տեղը Բար-ցելոնից արքեպիսկոպոս Դիեգօ Աստորգա ի Ցեսպեդեսին, բայց նա էն տարումը փոխեց իրա տեղը Տոլեդից արքեպիսկոպոս լինելով։ Նրա յաջորդ եղաւ 1720 թուի յուլիսի 18 ին Պամպելունից արքեպիսկոպոս Յովսէփ Կամարգօ, որ Ինկվիզիցիային մեծ յարգ տա-լեց էն ժամանակը, երբոր Եւրոպայի շատ երկրներումը, նա և Ամերիկումը տարածուել էր ֆրան-մասոնութիւնը։ Իւր ընկերու-թեան ոգին մտաւ Ֆրանսիա 1725 թւին. ութը տարի անցնե-լից յետոյ այս ախտը փոխուեցաւ՝ Հոլանդիայ, Գերմանիայ և Իտալիայ։ 1733 թւին Հիւսիսային Ամերիկումը մասոնական շատ աղանդներ կային։

Առաջին սաստկութեան հնարքը մասոնութեան դէմ Եւրո-պայումը հրատարակուեցաւ 1732 թւին սեպտեմբերի 14 ին Ֆլո-րենցումը Տասկէնի պօլիցից։ Նա արգելեց ժողովները և պա-տուիրեց Տասկէլօ վճարել 1000 լիր, էնդուր որ նրա տան մէջ Ռոմումը հաւաքւում էին մասոնական ժողովներ։ Կլիմէնտ ԺԲ-ը հրատարակեց շատ սաստիկ հրամաններ մասոնների դէմ. բայց նրանք մնացին անկատար, էնդուր որ երկու թագաւորող ար-քայազունքը չամաչեցին ընդունել (Մեծ-արևելեան) կարգի Գրոսս-մեյստրի տիտղոսը։ 1737 թւին Հոլանդից կառավարութիւնը արգելեց ֆրան-մասոնեան ժողովը, բայց կրկին արգելքը վեր ա-ռաւ և էն աղանդին պաշտպանեց։ Ռէյնի Կուրֆիւրստ Պալատինը նմանապէս արգելեց էս աղանդը իրա երկրումը. բայց հանդիպե-ցաւ սաստիկ ընդդիմութեան, երբոր հրամայեց շատերին բանտար-կել։ Տարանից Հերցօգը արգելեց աղանդները և Կլէմէնտ ԺԲ-պապը Հռոմումը արգելեց մահուան երկիւղիւ մասոնական աղանդ-ները, հրաման դրելով Ֆլորենցից Ինկվիզիթորին ֆրան-մասոն-ների եռեկից ընկնել. բայց Լօտարինգեան Ֆրանցիսկը, երբոր էս

թագաւորութեան մեծ Հերցոգ դառաւ, Ինկվիզիթօրին քշեց, բանտարկածներին ազատեց, և իրան մասոնները պաշտպան հրատարակեց։

Մինչև հիմի Հռովմէական Ինկվիզիցիան խառնուում էր միայն մասոնութեան մէջ և Կլէմենտ ԺԲ պապից խնդրեց և ընկալաւ Իտալիոյ մէջ էս աղանդը արգելելու կոնդակ. շուտով կը տեսնենք, որ բարձրագոյն խորհրդարանն էլ մեծ մտադրութեամբ պարապեցաւ էս բանի վրա։

Գեներալ-Ինկվիզիթօր Կամարագոյի օրերումը Մօլինոյի աղանդը շատ յառաջադիմութիւն ունեցաւ Իսպանիումը և խորհրդարանին տուաւ պատեհ բոլոր իրա ջանասիրութիւնը ցոյց տալու։ Մօլինօս Հռովմումը հաստատուելուց առաջ սովորեցրուց մի քանի աշակերտներ, որոնք պարապեցան նրա ուսումը տարածելու։ Կարծեալ հոգևորական կատարելագործութիւնները էնպիսի կանոնաւորութեան հետ, որ հոգւոյ անկարգ կրից տալիս էր կատարեալ ազատութիւն, գայթակղեցրուց շատերին, որոնք առանց էն խաբէութիւնների, որոնցով ծածկուած էին Մօլինոյի ցնորքները, երբեք չէին ընկնիլ ոչինչ հերետիկոսութեան մէջ։ Ինկվիզիցիան Օլիւեդօյ եպիսկոպոսին զրկեց իրա տեղից և բանտարկեց իբրև մօլինական։ Մօլինոյի մեծ աշակերտ Յովհան Կաւզաղան այրւեցաւ փայտակոյտի վրա, իսկ Կարմէլիտեան կրօնաւոր Յովհան Լօնգաս էս ուսման նախանձայոյզ պաշտպանը Լօգրօնիոյ Ինկվիզիթօրներից դատապարտուեցաւ երկու հարիւր մահուան մտրակի։

Կրօնական ուսումը արագընթաց տարածուեցաւ վանքերի մէջ և մեծ հոգսի մէջ գցեց Ինկվիզիցիան, մանաւանդ Վալյադօլիդինը և Լօգրոնիայինը. վանքերի խուցերումը այնքան շատ գայթակղեցուցիչ տեսարաններ էին ըլնում կուսանաց և նրանց առաջնորդների մէջ, որ չէ կարելի առանց զարհուրելու կարդալ էս ժամանակաց պատահմունքների յայտարարութիւնները։ Անառակութիւնը լուս ընկաւ շատ վանքերի մէջ և գտնում էր արձակ համարձակ մի տեսակ էնպիսի ինքնահաւանութեամբ, որ նման էր ֆանատիզմի։ Ինկվիզիցիան դէմ կանգնեցաւ նրան իրա բոլոր անգթութեամբ, և շատ վանքերից դուրս արաւ անառակ կուսերին. բայց զարմանալի է, թէ նա այնքան յայտնի անկարգութիւններից յետոյ, որոնց պատմութիւնները լեցրել են ամբողջ դիւաններ, ինչի՞ կրօնաւորներից չքշեց կուսանոցների վրա

ունեցած իշխանութիւնը ։

Կամարգօն, որ ծերան կարելէ էր վաճառականներին, մեռաւ 1770 տարուայ Մայիսի 24ին երեսուն տարի կառավարելուց յետոյ. Փիլիպպ Ե-ը նրա տեղը կարգեց Վալէնցիոյ արքեպիսկոպոս և Կաստիլիոյ խորհրդարանի գուբերնատոր Անդրէյ Օրբէ ի Լարրէատէգուի։ Օրբէի կառավարութեան ժամանակը Սիցիլիոյ ինկվիզիցիան բաժանուեցաւ Իսպանիոյ ինկվիզիցիայից։ Կղզին դեռ ևս 1731ին դուրս էր եկել Կաստիլիոյ իշխանութեան տակից, և նրա Թագաւորը Կարլը խնդրեց և ընկալաւ պապից կոնդակ ինքնագլուխ ջեներալ-ինկվիզիթօր ընտրելու. իսկ Կարլի ժառանգ Ֆերդինանդ Դ-ը բոլորովին փչացրուց ատելի դատարանը 1782 թուին ։ Օրբէն մեռաւ 1740 թուումը, էն ժամանակը, երբոր Փիլիպպ Ե-ը հրովարտակով հրամայեց բանտարկել և նաւարանի ծառայութեան մատնել շատ մասօններին։ Թագաւորի բարկութիւնը օրինակ դառաւ. ինկվիզիթօրները նոյն տեսակ խստութեամբ վարուեցան մի աղանդի անդամների հետ, որ լոյս ընկաւ Մադրիդումը։

Օրբէի տեղը մնաց պարապ երկու տարի. 1742 թուումը նստաւ Ս. Եագոյից Արքեպիսկոպոս Դօն Մանուէլ Իսիդոր Մանրիկ Լարա։ Նա անհաւատալի խստութեամբ հալածեց Ֆրանչիսկեան կրօնաւոր Բէլլանդօ, որ գրել էր Իսպանիոյ քաղաքական պատմութիւնը, նկարագրելով այս տէրութեան բոլոր երևելի անցքերը Փիլիպպ Ե-ի գահ նստելու օրից մինչև 1733 թուին ։ Թագաւորը երկու անգամ կարդացել էր էս պատմութիւնը և հրամայել էր տպել։ Բայց ինկվիզիցիան նրա վրա արգելք դրեց, էնդուր համար, որ հեղինակը կշտամբում էր ինկվիզիթօրներին անկանոն գործերի համար. Բէլանդօյ դրեցին դատարանի գաղտնի բանտը, և ենթարկեցին անողորմ տանջանքների. յետոյ բանտարկեցին վանքումը մինչև մահը և արգելեցին բան գրել ։ Նոյնպէս ծայրագոյն դատարանը միշտ պրծնում էր էն հեղինակների ձեռից, որոնք ցանկանում էին կառավարութեան և հասարակութեան աչքերը բաց անել։

Մանրիկը մեռաւ 1745 թուումը ունենալով իրա ձեռքի տակ տասն և եօթը դատարաններ, որոնցից ամէն մէկը կատարում էր իւրաքանչիւր տարի գոնեա մին աւտօ - դա - ֆէ.

Մեռնող ջեներալ-ինկվիզիթօրի տեղ Փիլիպպ Ե-ը կար-

դեց Տիրուէլի եպիսկոպոս Ֆրանչիսկ Պերեց Պրադօ է Կուէստա, որ դեռ ևս Հռոմայ պապից կոնդակ չստացած Փիլիպպ Ե-ը մեռաւ։ Նա բուրբոնեան տան Իսպանիոյ առաջին Թագաւորը տիրեց վեց տարի, և Թէպէտ Թագաւորութեան միջին տարիներում պատրաստում էր տալ Թագը իւր որդի Լուդովիկ Ա.ին, բայց նրա մահուան պատճառաւ կրկին ինքը վեր առաւ և պահեց մինչև իւր մահուան օրը, այն է 1746 տարուայ յուլիսի 9ը։

Եւրոպան հաւատացեալ էր, Թէ Ինկվիզիցիան դադարել է իւր խստութիւններից էն ժամանակից, երբոր գահը Բուրբոնեանց ձեռը ընկաւ. բայց էս կարծիքը անհիմն է։ Յիրաւի Թէպէտ էս Թագաւորները Ինկվիզիցիայի օգտակար օրէնքներ չըհրատարակեցին, բայց այնու ամենայնիւ չըոչնչացրին նրա հին օրէնադրքը, ուրեմն արգելք չէին տալի դատարանի շատ զոհերի դատապարտութեանը, որոնց Թիւը դեռ ես շատ մեծ էր Փիլիպպ Ե-ի ժամանակը. ընդհանրապէս հաշւում են 782 աւտօ-դա-ֆէ, 11,480 զոհերով, որոնցից 1600 ը այրուեցան կենդանույն, 760ը պատկերներով։

Աւտօ-դա-ֆէ և դատապարտութեանց նուազութիւն, որ երևում է Փիլիպպ Բ-ի և նրա ժառանգների ժամանակը, իսկական պատճառ պէտք է համարել, դրեթէ բոլոր Իսպանիոյում հրէութեան և մահմետական կրօնի անհետանալը, լուսաւորութեան և փիլիսոփայութեան յառաջադիմութիւնները, դրականութեան օգերը, Ակադեմիայի և օրագրերի տըքուիլը և վերջապէս 1737 տարուայ դաշինքը։ Այս ժամանակներումը սկսեցին Թոյլատրել շատ միտքեր, որոնք մինչև էն ժամանակը տգիտութեան և սնապաշտութեան պատճառաւ համարւում էին հակառակ կրօնի և ամբարիշտ։ Զօրօրինակ Գալիլէի կարծիքը, որ հեղինակի հետ միասին նզովուած էր Հռոմումը, ընդունուեցաւ. շատ գեղեցիկ շարադրութիւններ և մի քանի օտար Թագաւորների եզրակացութիւններ, որոնք մինչև էն ժամանակ համարւում էին Ինկվիզիցիայի դէմ յարձակմունք, յայտնուեցան Իսպանիումն էլ։ Ինկվիզիտօրները իրանք էլ առաջուաններից շատ աւելի լուսաւորեալ էին։ Այսպիսի փոփոխութիւնք եղաւ ԺԸ դարու միջումը, բայց նորա գեղեցիկ պտուղները երևեցան Ֆերդինանդ Զ-ի Թագաւորութեան ժամանակը։

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ։

## Ֆերդինանդ Զ., Կարլ Գ., և Կարլ Դ.

Փիլիպպ Ե-ի որդի Ֆերդինանդը Զ. բազմեցաւ գահը 1746 ին. էն ժամանակը գեներալ-ինկվիզիթօր էր Պերեզ Պրադօ և կառավարեց մինչև 1758 թիւը։ Նրա տեղ նստեցաւ Ֆարսալեայ Արքեպիսկոպոս Մանուէլ Կուինտանօ Բօնիֆացի. սրա ժամանակը 1759 թուին մեռաւ Ֆերդինանդը յանձնելով գահը իւր եղբայր Կարլ Գ-ին, որ էն ժամանակը Նէապօլիտանից թագաւորն էր։ Կարլի թագաւորութեան ժամանակը իշխեցին երեք գեներալ-ինկվիզիթօրներ՝ Կուինտանօ Բօնիֆաց, որ աքսորւեցաւ 1761 թուին, Սալամանկից եպիսկոպոս Ֆիլիպպ Բէրտրան, որ մեռաւ 1783 թուին, և Ջաէնի Ռուբին Ցեվալլոս, որ տեսաւ Կարլ Գ-ի մահը 1788 թուին։

Արքերի երջանիկ փոփոխութիւնները, փիլիսոփայութեան և կրթութեան զարգացող յառաջադիմութիւնները ստիպեցին բարձրագոյն դատարանը թուլացնել իւր առաջուայ խստութիւնները։ Թէպէտ նա կառավարւում էր էլի էն օրէնքով, բայց նրանից շատ քիչ էր մտիկ անում. թէպէտ դատերի թիւը չէր քչանում, էնդուր որ դատարանը առաջուայ պէս ընդունում էր ամբաստանութիւններ, բայց 600 սկսած գործից հազիւ թէ 10 վճռւում էին դատապարտութիւնով։ Վերացել էին արդէն էն նախապաշարմունքները, որոնք ստիպում էին դարաւոր մոլորութիւնները մեծ յանցանք համարել.

Երկու տէրութեանց ինկվիզիթօրներն էլ միասին դարձան դէպի չափաւորութեան կանոնները, որոնք մինչև էս ժամանակը անծանօթ էին ինկվիզիցիայի ժամանակագրութեանց մէջ։ Համարեա՛ թէ բոլոր մեղապարտները արձակւում էին թեթև ապաշխարանքով և եթէ մին քանիսը մտնում էին մարմնաւոր դատարանի, կամ ենթարկւում էին հրապարակական ապաշխարանքի, միշտ նրանց թիւը լինում էր քիչ, համեմատութեամբ անցեալ

դարերումը դատապարտուածների թուի հետ։ Համեմատելով Ֆերդինանդ Զ ի, Կարլ Գ ի և Փիլիպպ Ե ի թագաւորութիւնները, հենց գիտենաս, թէ նրանք շատ դարերով հեռու են իրարից։

Փիլիպպի երկու որդւոց չորս տարւայ կառավարութեան միջոցումը աւտօ-դա-ֆէ քիչ էր կատարւում. դատապարտուածներն էին միայն 245, որոնցից միայն 14ը մահուան վճիռ ընկալան, իսկ միւսները բանտերը գցուեցան։ Այս ուրեմն բարձրագոյն դատարանը այժմ միայն շուաքն էր էն հրէշացեալ դատարանին, որ սարսափեցնում էր հզօրներին և անզօրներին դեռ եւս էս դարու ըսկզբումը։

Ինկվիզիթօրները էս միջոցումը զբաղած էին միայն Մասօնների և Յանսենիստների գործերովը։ Կլեմենտ ԺԶ Պապը նոր կոնդակ հրատարակեց Մասօնների դէմ. իսկ Իսպանիայի մէջ շատ զօրացած Յեզուիտները անխնայ հալածում էին ամէնքին, որոնք չէին հետևում Մոլինայի շնորհաց և ազատ կամաց ուսմանը, որոնց նրանք անուանում էին Յանսենիստ։ Երկու կողմնակաց մէջ բորբոքուած ատելութիւնը շատ վճռեր հանեց. Ինկվիզիցիան դատում էր նրանց, և շատ անգամ արգելում էր նրանց շարադրութիւնները։ Էս սխօլաստիկեան պատերազմը տևեց մինչև Յեզուիտներին Իսպանիայից քշելու օրն էլ, այսինքն մինչև 1769 թիւը Կարլ Գ ի թագաւորութեան ժամանակը։

Մի և նոյն ժամանակումը և էս փոփոխութեան պատճառաւ սկսեցին Իսպանիումը ընդունել Ուլտրամօնտանիստների կանոնների դէմ ուսումը, որ զօրացնում էր թագաւորների իրաւունքը։ Սակայն հէնց էս կարծիքների համար դատապարտում էին օրէնսգէտներին և երևելի գիտուններին իբրև հերետիկոս և ամբարիշտ։ Բայց մարդկային մտաց զարմանալի հակասութիւնով՝ ինչ որ ԺԸ դարի սկզբումը համարում էին յանցանք, կէս դարից յետոյ նոյնը առաքինութիւն դառաւ։

Թէպէտ էս փոփոխութիւնները էսպէս արագընթաց էին գնում, բայց ունէին իրանց համար պատճառներ։ Զոր օրինակ. Յեզուիտներին քշելը թողեց իրանից յետոյ մեծ կողմնակցութիւն Ինկվիզիցիայի մէջ, որ ծարաւաբար ընդունում էր ամենայն մատնութիւնները էն մարդկանց վրայ, որոնք պահանջում էին աքսորանքը և մասնակից էին էս վճռին։ Դատերի մեծ մասը սկըսուեցաւ երևելի մարդկերանց դէմ, և նրանց ետևից ընկնում էին

իբրև Յանսենիստներ կամ փիլիսոփաների։ Այսպէս տարաբախտացան Կոմս Ռօդա Թագաւորութեան մինիստրը և սեկրետարը, որ ընդունում էր Յեզուիտներին աքսորել, երկու արքեպիսկոպոսներ և երեք եպիսկոպոսներ ծայրագոյն խորհրդարանի անդամներից, որոնք համաձայն էին նոյն մտքին, Կամպօմանէս ուսումնական հեղինակը և փիլիսոփան, Կոմս Ֆլօրիդայ Բլանկայ Թագաւորութեան մինիստրը և սեկրետարը, Կոմս Արանդայ Ֆրանսիոյ դեսպանը, Պաւլ Օլիվադէ Սեվիլլայի նախարարը, Կոմս Ռիկլայ զինուորական մինիստրը, Կլաւիխօ ուսումնական բնագէտը, Բենեդիկտ Բայլ երևելի մաթեմատիկը, Թօմմայ Իրիարտ շատ ուսեալը և ուրիշ շատերը իրանց ամբարշտական համարուած փիլիսոփայական գաղափարութիւնների համար։ Շատերին հալածում էին նա և իբրև Յանսենիստ, բայց բոլոր դատերը մնացին անկատար, էնդուր որ, երբ Յեզուիտների կողմնակցութիւնը կորցրուց իւր ազդեցութիւնը, կորցրուց նա և էս բաների դատելու կարողութիւնը և ստիպուեցաւ հանդարտել։

Մին Ֆրանսուզ քահանայ Լյէժենա անուն, որ յետոյ Մերտալիոյ եպիսկոպոս դառաւ, նմանապէս ընկաւ Իսպանիոյ Ինկվիզիցիայի հալածման տակ Կարլ Գ-ի Թագաւորութեան ժամանակը։ Նա մին անգամ Մադրիտ եկած՝ ուզման սիրով կամեցաւ օգուտ քաղել պալատի յարգանքից և կենդանացնել իւր շատոց ունեցած յոյսերը։ Էնդուր համար դրեց ձեռներեցութիւն՝ Ինկվիզիցիան ստորադրել ամենայն վիճակումը իւր եպիսկոպոսին, պատուարել կրօնաւորներին և կուսերին ճանաչել գլուխ իրանց վիճակի եպիսկոպոսին, և հնազանդել նրան, և աստուածաբանութեան ուսումնարանների մէջ ոչինչ զանազանութիւն չանել։

Եթէ Ֆրանսուզը լաւ ճանաչէր Իսպանիան և էս ժամանակի կրօնաւորների դրութիւնը, անկարծէք վաղօրօք կգուշակէր էն հալածանքը, որոնց տակը պէտք է ընկնէր. էնդուր որ նա իւր դէմ զինուորեց երկու հզօր խումբեր՝ Կրօնաւորների և Ինկվիզիտօրների։ Նա յետոյ, հէնց դատարանի լրտեսները իմացան նրա ձեռներեցութիւնը, իսկոյն նրա անունը դուրս եկաւ հերետիկոս, կալվինական և ամէն հոգևորական կարգերի թշնամի։ Այսու ամենայնիւ Ինկվիզիցիան, որ մին ժամանակ էնքան յանդուգն էր, չըհամարձակուեցաւ Լյէժենին բանտը դցել, էնդուր որ նրան պաշտպանում էր արքունի դուռը, և Լյէժենը գնաց Ֆրանսիայ։

Թէև չարագործութիւններ կային, բայց պէտք է ասել, թէ Ֆերդինանդ Զ՚ի և Կարլ Դ՚ի ժամանակաւ ինկվիզիթօրները շատ չափաւոր էին առաջուաններից, որոնք էին Փիլիպպի ժամանակը, մանաւանդ նրանից առաջ եղած երկու թագաւորների ժամանակը.

Կարլ Դ՚ը գահ բարձրացաւ 1788 թուի նոյեմբերի 17ին ջեներալ-ինկվիզիթօր Ցեւալլոսի ժամանակը, որ շուտով մեռաւ, այն է 1722 տարումը, և նրա տեղ նստեցաւ Սելիմբրիայ Արքեպիսկոպոս Մանուէլ Աբադ ի Լա-Սիերրա: Աբադին դուռը հրաժարեցրուց նրան 1794ին և կարգեց նրա տեղը Տօլէդոյ Կարդինալ Արքեպիսկոպոս Դօն Ֆրանցիսկ Լօրէնցանին. իսկ 1797 թուին արձակեց նրան և կարգեց Հնդկաստանի պատրիարք Դօն Ռամոն Յօզէֆ Արսէ: Արսէն դեռ ևս իսպանիոյ ինկվիզիթօրների գլուխ էր, երբոր Կարլ Դ՚ը հրաժարուեցաւ գահից և տուաւ թագը իւր որդուն:

Լուսաւորութիւնը՝ որ սկսել էր իսպանիոյ մէջ մտնել ԺԸ՝ դարու կիսից՝ մեծ յառաջադիմութիւններ արաւ Կարլ Դ՚ի թագաւորութեան ժամանակը. Նոյն երկու պատճառները, որոնք նրա տարածմանը արգելք էին, էլ չէկային Կաստիլիոյ մէջ Կօլլէգիաների բարեկարգուելից և Եզուիտների աքսորելից յետոյ. Մանրիկ Ռօնդայ՝ էս երկու պօլիտիկական հնարքների գլխաւոր պատճառը՝ կարաց զարթեցնել ընդհանուր նախանձայուզութիւն և ամենայն կարգի մարդկանց մէջ սիրել լուսաւորութիւն և ուսման սէր: Նա թագաւորի նստելուց քանի տարի առաջ փայլեցան շատ գերազանց մարդիկ, որոնք զարմացրին իրանց հայրենիքը:

Երբ որ Ֆրանսիումը ծագեցաւ ապստամբութիւն, իսպանիան լցուեցաւ վտանգաւոր շարադրութիւններով: Կարլ Դ՚ը նեղանալով էն ապստամբութիւնից, որ թունաւորել էր նրա սահմանակից տեղերը, հրամայեց իւր մինիստրին ամենասաստիկ միջոցներ գործնել չարեաց առաջքը բռնելու համար: Ջեներալ-ինկվիզիթօրն էլ իւր կողմից արգելում էր բոլոր ֆրանսերէն գրքերը և օրագիրները, և ամենայն աչալրջութեամբ աշխատում էր արգելել նրանց իսպանիոյ թագումն բերելը: Կոմսն Ֆլօրիդայ Բլանկայ, առաջին մինիստրը, հերիք չըհամարեց այս հնարքը: Նա դադարեցրուց բոլոր համալսարաններումը բնական և ազգային իրաւագիտութեան ուսումը: Վերջապէս ինկվիզիթօրները ստացան գրաւոր

հրաման, որով արգելուեցաւ ներս բերել և գործ ածել էն գրքերը, որոնք շարադրած էին նոր փիլիսոփայութեան կողմնակիցներից։

Դոն Լուգովիկ Ուրկիխոյի գործը հաստատում է, թէ բարձրագոյն դատարանը Կարլ Դ-ի թագաւորութեան առաջի տարիներումը զարհուրեցուցիչ վիճակի մէջ էր։ Մ.ալեո Ուրկիխօ նախարարութեան պաշտօն ստանալեց առաջ երևելի էր իր գիտութեամբը և փիլիսոփայական խորին տեղեկութեամբ։ Երբ որ Ինկվիզիցիան կամեցաւ էս փիլիսոփային բանտարկել, էն ժամանակը առաջին նախարար Կոմս Ա.ռանդա առաջարկեց թագաւորին ընդունել նրան ծառայութեան մէջ, և նա 1792 թուին կարգուեցաւ արքունի սեկրետարի տօտ։ Ինկվիզիթօրները տեսնելով որ իրանց ընտրած զոհը բարձրացաւ, թողին նրան հանգիստ։ Ուրկիխօ առաջին նախարարի աստիճանի հասնելից յետոյ քանդեց իր նախորդի բոլոր կարգադրութիւնները և Պիոս Զ-ի մահը իր օգտի համար գործ ածելով, կամեցաւ խլել Իսպանիան Վատիկանի ձեռից, և պատրաստեց հրովարտակ, որով եպիսկոպոսներին տրւում էին էն ամէն իրաւունքները, որոնք խլել էր նրանցից Հռոմը։ Ա.յսպիսի համարձակ ձեռնարկը պէտք էր իր ետևից բերել Ինկվիզիցիայի նորաձևութիւնը. նախարարը կամենում էր բոլորովին ոչնչացնել նրան, և նրա կայքը բաժանել աղքատանոցներին և հասարակօգուտ տեղերին։ Մնացել էր միայն էս զարհուրելի վճիռը մատուցանել թագաւորին, բայց սատանութիւնները նախարարին գցեցին թագաւորի աչքից, և էն ժամանակը ծայրագոյն դատարանը բանեց իր ուրը։ Ուրկիխօյին գցեցին կեղտոտ բանտի մէջ և սաստիկ անյայտութեան մէջ պահեցին մինչև Կարլ Դ-ի մահը. վերջապէս նա մեռաւ Փրանսիայում 1817 թուին։

Իսպանիայ Ինկվիզիթօրները պարապում էին ուրիշ վճռով էլ, որոնք երևելի են Յանսենիութեան գործով և էն սկզբունքով, որոնք հէնց գալան Փրանսիայից հոգևորականների քաղաքական կախմանը ազգային ժողովներից. մանաւանդ Յանսենիստները ընկան սաստիկ հետապօտութեան տակ, էնդուր որ, երբ Եզուիտները 1798 թուին հրաման ստացան վերադառնալ Իսպանիայ, էն ժամանակ նրանց ներկայութիւնը վրդովեց թագաւորած հանգստութիւնը, և կառավարութիւնը կրկին աքսորեց նրանց։

Այն անգամ էլ Ինկվիզիցեան բարձրայրոց իրա գլուխը էն կռուի մէջ, որ սկսեց նա երևելի Միրայ իշխանի հետ, որ էր եղբայր Թագաւորի և Թագուհւոյ իրա կին Բուրբոնեան Մարիա-Տերեզիայի կողմից: Լաւ պէտք է հասկանալ, թէ որքան սատանութիւն և խորամանկութիւն հարկաւոր էր էսպէսի հզօր և երևելի մարդու վրայ յարձակելու համար: Իշխան Միրայ Գոդոյին Ինկվիզիցեան մեղապարտ էր ցոյց տալի Թագուհւոյ խոստովանահօր քսութեամբը անաստուածութեան մէջ, էնդուր որ նա ութը տարի չէր խոստովանել, և գայթակղեցուցիչ կեանք էր վարում:

Էն ժամանակւայ գեներալ-Ինկվիզիթօր Լօրէնցանա, որ պարզամիտ և երկչոտ մարդ էր, չըհամարձակուեցաւ բանտարկել իշխանին: Բայց էս բանի գլխաւոր պատճառ եղողները Թագուհին խնդրեցին պապից և ստացան հրաման բանտը դնել իշխանին: Նապոլէօն Բօնապարտէն, որ էն ժամանակը Ֆրանսիայ հասարակապետութեան գեներալ էր, բանեց Գենուայումը պապի սուրհանդակին և հասկանալով Ֆրանսիայ և Իսպանիայ մէջ եղած բարի համաձայնութեան վնասութիւնը, վստահացաւ իմաց տալ իշխան Միրային էս սատանութիւնները. և էնդուր համար հրամայեց գեներալ Պերինիօնին, որ դեսպան էր Մադրիտումը, յանձնել իշխանին բոլոր գրագրութիւնները: Իշխանը քննեց իրա թշնամիների բոլոր որոգայթները և հրաժարեցրուց Լօրէնցանային: Էս հանգամանքը պատճառ էր ծայրագոյն դատարանին վտանգ՝ առանց թագաւորի հրամանի ոքինի բանտարկելու:

Ուրկվիխօյի պէս՝ նախարար և արքունի սեկրետար Մելխիօր Խօվանէլեօսն էլ սկսեց դատարանի գործերի ընթացքին նոր ձև տալ, աւելի դրեանց արգելելու գործերումը. բայց նա զրկուեցաւ իրա տեղից, հրատարակուեցաւ Ինկվիզիցիայի թշնամի և աքսորուեցաւ Մայօրկայ կղզին:

Շատուց էր, որ Ինկվիզիթօրները չէին դրել էնպէսի մըձիւ, որով մեղապարտները ընկնէին գլխապարտութեան դատաստանի տակ. և ահա 1805 թուին Սարագոսից ծայրագոյն դատարանը դատապարտեց մին քահանայի եկեղեցուց արգելած կարծիքների համար. բայց մեղապարտը սաստիկ դէմ էր կենում բոլոր ամբաստանութեանց, և Ինկվիզիցիայի վճռով մատնուեցաւ աշխարհական դատաւորների: Բարեբաղդաբար էս քահանան հիւանդացաւ և մեռաւ բանտումը. ծայրագոյն խորհրդարանը արգելեց շա-

բռնակել մեռածէ գործը, և չըհրամայեց այրել նրա պատկերը։

Ծայրագոյն դատարանի մահի վճռած մարդկերանցից վերջինն էր սա, և էս քահանայի պատիժը անպատճառ կըկատարուէր, եթէ նա չըմեռնէր էն ժամանակը, երբ որ ծայրագոյն խորհրդարանը սկսեց ինքը վերաքննել նրա գործը։

Արանժուէցում վերջին քրէական գործի վերջանալուց մին տարի յետոյ բացուեցան երեւելի պօլիտիկական խռովութիւններ, որոնցով էնքան վրդովուեցաւ Կարլ Դ-ը, մինչև որ թագը վեր դրեց և յանձնեց իւր մեծ որդի Աստուրիոյ Արքայազնին, ցանկալով ազատել իւր, իւր կնոջ և իշխան Գոդոյի սիրելիների կեանքը. իշխան Գոդոյին էն ժամանակը գերի էր Ֆերդինանդի մօտ։

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ։

## Ֆերդինանդ եօթներորդ։

Նոր թագաւորը տիրութեան սանձերը ձեռքը առաւ 1808 թուին Ֆերդինանդ Է. անունով իւր հօր հրաժարման թղթի յայտնուելուց առաջ։ Կարլ Դ-ը բողոքեց, թէ նրա հրաժարումը բռնի է եղած. բայց Ֆերդինանդը բանի տեղ չըդրեց բողոքը, և էստուրից ծագեցաւ թագաւորական գերդաստանի մէջ երկպառակութիւն։

Ամենին յայտնի է, թէ Նապոլէօնը ինչպէս օգուտ քաղեց էս հանգամանքից և ինչպէս կարաց Իսպանիական Բուրբօններին վեր գձել գահից և նստեցնել իւր եղբայր Յովսէփին. բայց կարելէ է ոչովին յայտնի չէ, թէ Ֆերդինանդ Է-ը Վալանսէից գիր գրեց Յովսէփին, շնորհաւորեց նրան, խնդրեց նրանից բարեկամութիւն, և մի և նոյն ժամանակումը հրամայեց բոլոր Իսպանիացիներին հնազանդել նոր թագաւորին։

Ժողովուրդը, զրկուած իւր օրինաւոր թագաւորից և օտա-

րի մտանուած, լեցուեցաւ ատելութիւնով, ոտքի կանգնեցաւ, ջարդեց Բայլենի մօտումը զեներալ Դիւպոնին և ստիպեց նոր պալատին անցկենալ Էբրօ գետի միւս կողմը։ Իսպանի անհնազանդութիւնը դուրս կանչեց նոյն ինքն Նապօլէօնին իսպանիայ հզօր զօրքով։ Նա յաղթեց Բուրգոսի և Գուադարրամի մօտ եղած պատերազմումը և առաւ Մադրիտ քաղաքը պաշարմունով։

Օտար զօրքերի էն տիրութեանը տիրելէց յետոյ թէպէտ Ինկվիզիցիան համարեա թէ բոլորովին ոչնչացած էր և նրա զեներալը անգործ էր մնացել, սակայն Նապօլէօնը կամենալով ունենալ իսպանիումը մնացորդներ, 1808 թուի Դեկտեմբերի 4 ին Մադրիտի մօտ խամարտին գեղումը գրած հրովարտակով հրամայեց քարուքանդ անել ծայրագոյն դատարանը, իբրև առեան բարձրագոյն իշխանութեան կանոնների անհամաձայն, և այրել ծայրագոյն խորհրդարանի բոլոր գործերը։ Նոյնու ամենայնիւ բոլոր օրագիրները, ուրբանի հրովարտակները, պապական կոնդակները պահեւցան, ենդուր որ հարկաւոր էին ուրիշ դէպքերի համար։

Ի հարկէ բոլոր իսպանիացիքը կըմայլէին էս բարերար տնօրէնութիւնից, եթէ էս բանը անէր իսպանիացի. բայց էս հանդամանքը վիրաւորեց կաթոլիկական անձնասիրութիւնը և քիչ մնաց որ ծայրագոյն դատարանը կրկին սաքրուէր։ Ինկվիզիցիայի ծառայողները և մնացորդները սկսել էին արդէն Նապօլէօնի հրամանը պատճառ բռնելով խնդրել, որ կրկին հաստատուի դատարանն։ Բարեբաղդաբար իսպանիացիք ունէին ուրիշ դիտաւորութիւն, և ձեռքից չէին թողնում միջոցը պատրաստել ժողովրդի միտքը հանդիսով քարուքանդ անել Ինկվիզիցիան։

Քիչ ժամանակից յետոյ իսպանիոյ պատգամաւորները հաւաքուեցան Կադիկսումը և սկսեցին լուծումն տալ էն հարցմունքներին, որոնք գրած էին հրովարտակների մէջ, երանց վրա առին ազգային ժողովի (կօրտէս) անունն, ոչնչացրին Բայիօնումը ստորագրած հրաժարման թուղթը և Կարլի բոլոր հրովարտակները, որոնք դուրս էին եկել Նապօլէօնի ձեռքի տակը եղած ժամանակումը։ Մի և նոյն ժամանակը ոչնչացան բոլոր տէրական իրաւունքները, բոլոր արտօնագիրները և ֆէօդալական կառավարութեան ուրիշ գերազանցութիւնները. և 1812 թուին Կադիկսումը հանդիսով հրատարակուեցաւ իսպանիական Կօնստիտուցիա, որով Ինկվիզիցիան ոչնչացաւ, մանաւանդ որ թշնամիքը և ընդհանուր կոր-

տեսները անպատճառ հարկաւոր էին համարում յայտնի և հրապարակաւ ճնշել էն առեանը, որ եղած քաղաքացութեանց պատճառ էր դառել թագաւորութեանը մարդկային մտաց բացման արգելք լինելով, որ միայն մտածելու համար էլ հալածում էր և քաղաքական լուսաւորութիւնը արգելում էր։

Ինկվիզիցիայի վերջնելը կատարուեցաւ քուէից երեք մասից երկուսի առաւելութեամբ, և համարեա թէ նրա բոլոր պաշտպանները խնդրում էին փոխել նրա քննութեան ձևերը։ Իսպանիայ երեսփոխանները ամէն կողմից օրհնութիւն էին ստանում ատելի դատարանի քանդելուն համար, ամենայն կողմից լսում էին շնորհակալութիւն ազատութեան, փանատիզմի, սնապաշտութեան և նախապաշարմունքների վրա ստացած յաղթութեան համար։

Ինկվիզիցիայի ոչնչացնելուց յետոյ ժողովականները պարապեցան վանքերը բարեկարգելու, սահմանափակեցին կրօնաւորաց թիւը, գրեցին սաստիկ կանոններ ունկնդիրների (մոնեերի) ընդունելու և աստիճան տալու համար։ Սահմանեցին հոգևորականաց կայքերը փչացնել, և նշանակեցին գումարներ թագաւորական պարտքերը տալու համար. բայց էս բոլոր կարգադրութիւնների մէջ պահպանեցին մեծ զգուշութիւն, և հեռու մնացին բոլոր վախճանական վճիռներից։ Կրօնաւորներին իրաւունք տուին դառնալ աշխարհական և վանքերից դուրս եկողների համար կարգեցին թոշակ։ Իսկ եկեղեցական կարգադրութեանց մէջ միայն կտրեցին առանց պաշտօնի մնացեալ կրօնաւորների թոշակը։ Տարաբաղդաբար բոլոր էս փրկարար նորաձևութիւնները մնացին անկատար։ 1814 թուի Մարտին Ֆերդինանդ Է-ը վերադարձաւ Իսպանիայ։ Նրա չորս կողմը իսկոյն պատեցին նախապաշարմունքներով և հին մտքերով լցուած, անտաղանդ, էն ժամանակուայ կրթութիւնից հեռու մնացած, և միայն իրանց կրքերովը կառավարուած մարդիք, և իրանց ձեռք առին բոլոր իշխանութիւնը։

Ֆերդինանդ Է-ի կառավարութեան առաջին հրովարտակը եղաւ Ինկվիզիցիայի վերականգնումը, որի գլուխն էր էն ժամանակը Ալմերի եպիսկոպոս Դօն Ֆրանցիսկ Միերա Կամպիլլօ։

Այս քառասուն և հինգերորդ գեներալ-Ինկվիզիթորը 1515 թուի սկզբում հրատարակեց կոնդակը, որ թէպէտ լիքն էր ամենադառն հրամաններով, բայց էլի կարող էր յարգանք տալ գլխաւոր դատարանին, ամէն փոքր ցոյց տուեց, թէ Ինկվիզի-

Թօյների հեղութիւնը և չափաւորութիւնը բերում էին իրանց ետևից խիստ ողբալի պտուղներ։ Աղքատ և ատելութիւնից, նախանձից, վրէժխնդրութիւնից և կողմնակցութեան ոգուց ծնած մատնութիւնները երբէք չէին պատճառել Իսպանիում այնքան տարաբաղդութիւններ, ինչպէս էս միջոցումը։ Բարեբաղդաբար Պիօ Է պապը արգելեց տանջանքը, սակայն ծածուկ բանտերը և խոր վիրապները լցուեցան Ինկվիզիցիայի նոր զոհերով, և կղզիները մեծազգի աքսորականներով։

Ազգային երկու ժողովքների անդամների և Իսպանիոյ բոլոր քաջ պաշտպանների հետ խիստ վարուիլը էս ժամանակումը իրաւացի կարծիք դցեցին՝ չը լինի թէ յետ դառնայ տգիտութեան և բարբարոսութեան դարը, որ վիշտալու ժողովրդեան տանելորդմար. բայց հասարակաց կարծիքի անյաղթելի զօրութիւնը անդադար կռւում էր ընդամառեալ բռնակալութեան և ծայրագոյն դատարանի հետ։ 1820 Թուի 20 ին Լէօնումը բացուեցաւ ապստամբութիւն, շուտով տարածուեցաւ բոլոր նահանգներումը և Ինկվիզիցիան իրա բարեկամներով և փայտակոյտներով անհետ եղաւ Սպանիայի երկրումը. Ժողովուրդը ամէն տեղ քանդում էր ծայրագոյն դատարանները, արձակում էր զոհերին, կտրտում էր Ինկվիզիցիօնների տուները և նրանց դարհուրելի բանտերը, ջարդ ու փշուր էր անում բոլոր տանջանքի գործիքները և կանգնեցնում էր իրա դրօշակները էն տեղի յիշատակարանների տեղը, որոնք ներկուած էին արդար մարդկերանց արիւնով։

Երբոր Լայբախի և Վերոնիոյ ժողովքները վճռեցին ստիպել պատգամաւորներին փոխել Սպանիայի կանոնադրութիւնները, էն ժամանակը Ֆրանսիոյ սահմանակից Իսպանիական նահանգներումը հաւաքուեցան զինուորուեալ ամբոխներ հաւատոյ զինուորութեան անուանեալ, որոնք իրանց գլուխ ջոկեցին Տրապիստին։ Էս կատաղի խուժադուժները, որոնք վարձած էին և սնունդ էին ստանում Իսպանիոյ հոգևորականներից, կռւում էին ազատականների հետ ոչ միայն զօրքի վրայ անսահման իշխանութիւն Ֆերդինանդին տալու համար, այլ և Ինկվիզիցիան վերականգնելու համար։ Նրանք ամէն տեղ անկարգութիւններ էին անում, ամէն տեղ չարագործութեամբ լցնում էին, երբև խառնիճաղանճ ամբոխ կրօնական փանատիզմով առաջնորդուած։

Ֆրանսացիները, Իսպանիայ մտնելեց յետոյ, ամրացրին իրանց

օգնական ունենալ այնպիսի մարդկերանցը, և ստիպուեցան արձակում խնդրել։

Այն ժամանակը բռնակալութեան և Ինկվիզիցիայի մարտագիրները ծածկեցին իրանց երեսը Թագաւորի մեղմութեան դիմակով։ Հոգևորականներից վարձ ստանալով և առաքելական դեսպաններից (ինչպէս իրանք անուանում էին իրանց), ստանալով զէնք և հագուստ, նրանք բոլոր Իսպանիայում ահ ու դող գցեցին։ Դա էլ մի Ինկվիզիցիա, կամ լաւ ևս ասել փոքրիկ ընկերութիւն էր, որի սարքելու համար երբեմն Ինկվիզիցիան խիստ աշխատում էր, և որին հերքեց Փիլիպ Բ-ը իբրև վտանգաւոր։

Երկար ժամանակ անպատիժ մնացին էս բոլոր գազանական գործերը ֆանատիկների, որոնց օգնում էր առաքելական ժողովը տանից տալու Ֆերդինանդի անունը․ վերջապէս Թագաւորի կարծեցեալ կողմնակցները ընկան հասարակաց ատելութեան տակ, և նախարարները հրաման հանեցին բանել նրանց գլխաւորներին և մատնել անողորմ տանջանքի։ Այն ժամանակը շատ Եպիսկոպոսներ, որոնք պաշտպան էին մի քանի ամբոխների առաջնորդող կրօնաւորներին, սկսան օրինական կռիւ բաց անել աշխարհական իշխանութեան հետ, որ տակաւին բաւական զօրացած չէր։

Զուր թէ խաղաղեցան արքունի ինքնակամ զինուորների աղմուկները, կամ լաւ ևս ասել Թագաւորականների ամբոխները, որոնք ծառս անելով ձայն էին տալի՝ կեցցէ Ինկվիզիցիան, Կատալոնիումը բաց ելաւ նոր աղմուկ, որ նրա բոլոր սահմաններումը տարածեց հուր և սուր։

Ս. Հերմանդադ (եղբայրութիւնների) անունով մեծ բազմութիւն զինաւորեալ ամբոխների ման էին գալի բոլոր Կատալոնիայումը, իբր թէ Թագաւորական իշխանութիւնը իրա բոլոր իրաւունքներով վերականգնելու համար։ Բայց դժուար չէր նկատել, թէ էս արքունի իշխանութեան կարծեցեալ պաշտպանների մէջ ծածկուած էին կողմնակցների նպատակներ և դաւեր, որոնք ցանկանում էին ինչպէս կ'ուզէ ըլնի իրանց ձեռքը գցել ինքնակալ իշխանութիւնը և ետ դարձնել էն, ինչ որ մի անգամ հարկադրուած տուել էին։ Շուտով հասկացան, թէ էն ծածուկ դաւերի սկիզբը, որոնք յայտնի ալէկոծում էին Կատալոնիան, թաքցրած էր մի քանի վանքերումը, որ տեղ առանձնացեալ կենում էին անկրօնում և խիստ թունդ հակառակորդներ, որոնք ցանկանում էին

Ինկվիզիցիան վերականգնել ·

Բերենք այստեղ Բարցելոնիայի աուդիենցիայի (1) ֆիսկալի (ժեներալ-ներսի օգնական պաշտպանի) Դեզեզի խօսքերը, որոնք ասել են Կատալօնիոյ աղմուկի քաղաքական պատճառների գեղեցիկ նկարագրութիւնը, որ մատուցաւ Ֆերդինանդ Է-ին նրա Արագոնիայ գալու ժամանակը։ Ահա ինչ է ասում նա։ ,, Կատալօնիայի աղմու-
,, կը է ծնունդ ընդարձակ և խոր դաւաճանութեան, որ առեղծուած
,, է հանդարտութեան մէջ, որը որ կրկին և կրկին մտածած է,
,, շատ անգամ սրբագրած է, և հզօր վստահութիւնով կառա-
,, րած է։ Նա պտուղ է անողորմ և արիւնածարաւ դաւաճանու-
,, թեան, և արմատ ունի օտար տէրութեանց մէջ . Նա սաստիկ
,, ազդեցութիւն է անում թագաւորութեան ամենայն վիճակի
,, մարդկանց վերայ, նրան նեցուկ են ամենայն բարձրապատիւ ան-
,, ձինք, որոնց վրայ յուսալով նա յանդգնութեամբ և աներկիւղ
,, յարձակւում է օրինաւոր թագաւորի իրաւունքների, թագաւո-
,, րական կարգադրութիւնների և մեր սուրբ կրօնքի վրա , նա
,, յանդգնութեամբ դիմում է փչացնել ու հաստատ բոլոր իր
,, ընդդիմակացներին, թէ և լինին նրանք բոլոր բնակչաց կէսը ·
,, Իսպանիոյ հոգևորականաց բազմաթիւ խումբը գլուխ է
,, դառել ամէն դաւաճանութեանը, որ թափում է երկրակից-
,, ների արիւնը · Հոգևորականութիւնը (պէտք է պօրցրնել), մտա-
,, նելով արքունի դրան փառաւորների, առաջնանից պրկուած զին-
,, ուորականների և ռամիկների, ցած և անարգ մարդկերանց հետ,
,, հոգևորականութիւնը, որ պաշտպանուած է նեղացած աղքատ ամ-
,, բոխից և ամենաստոր ռամիկների գործակցութիւնով, յեն-
,, ւել իրանց անչափ հարստութիւնների վրա, որոնք են պտուղները
,, և խաբէութեան միջոց, պաշտպանութիւն գտնելով օտարազգի
,, հոգևորականներից, — բարձրացրուց աղմուկի դրօշակ, որ սպառ-
,, նում է բոլոր Իսպանիային սև հագցնել ·

,, Այն ժամանակ, երբոր առանց դատողութեան, այս աղմուկի պատճառ կարծում են ժողովրդին, անառակութիւնը, հա-

---

(1) Է բառ լատինական։ և նշանակում է ունկնդրութիւն, երբ թագաւորը կամ այլ մեծ մարդ առանձին լսում է ուրիշի խնդիրը կամ աղերսարկութիւնը ·

,, ւսքի սառնութիւնը և բարուց ապականութիւնը, աշխարհի
,, մեծ գայթակղութեան համար պէտք է փնտրել նրանց հո-
,, գևորականութեան գլխումը, որ բարեպաշտութեան, փառաց և
,, ամենայն առաքինութեանց աղբիւրն է։ Վանքական խուցերից
,, դուրս է գալի կոյր ամբոխ, որ զէնքը ձեռքին բռնած պահան-
,, ջում է էնպիսի բարեկարգութիւն, որ ինքը չի հասկանում,
,, ցանելով միայն աւերած և կորուստ իրա հայրենի երկրումը։
,, Սրբութեան տաճարների հիմքերից դուրս են գալի հրդեհի հրա-
,, ւէրներ, չարագործութեան և յանցանքների համար հեղեղի պէս
,, թափւում են վարձատրութիւններ, ֆանատիզմի և սնոտիա-
,, պաշտութեան համար խրախոյսներ։ Դժուարին է հաւատալ,
,, բայց էս բանը յայտնի էլ անցկացած է։ Տեսէք, թէ ինչպէս
,, Իսպանիոյ հոգևորականութեան անդամները սարքում են իրարու
,, մէջ ծածուկ ընկերութիւններ, կապւում են իրարու հետ զար-
,, հուրելի երդումներով և գործում են էնպիսի չարագործու-
,, թիւններ, որոնք իրանք նզովել են։ Նրանք հանդարտ դիմում
,, են դէպի իրանց մտքերի կատարածը. Նրանց չեն կասեցնում
,, ոչ խայտառակութիւնը և ոչ իրանց բռնած բաների զզուանքը.
,, Նրանց համար ամենայն բան թոյլատրած է՝ ստախօսութիւն, ըս-
,, պանութիւն, զրպարտութիւն, մէկ խօսքով ամենայն աստուա-
,, ծային և մարդկային օրինաց ոտի տակ առնելը, նմանապէս և
,, մեր սուրբ հաւատոյ հասարակ իրաւունքների զանցառութիւնը։
,, Վանքերը դառնում են զինարան կամ զօրաց ձմերանոց։ Աւե-
,, լի քաջասիրտ կրօնաւորները գլուխ են դառնում կատաղի ամ-
,, բոխների. անպատկառ թեթևամտութիւնը սուր է հանում
,, պատժել որդկերանցը հօրերի յանցանքների համար, որոնք ցան-
,, կանում էին էս թեթևամտութիւնը դնել կանոն իրանց կար-
,, գադրութեանը, և ռամիկները, որոնք անօգուտ են հասարակու-
,, թեան համար, նուիրում են իրանց ծառայութիւնը էն կուռ-
,, քի պաշտպանութեան համար, որի կարողութեան տակ իրանք
,, էլ պէտք է մէկ օր ընկնեն։ Վերջապէս Իսրայէլի որդիքը ա-
,, մէն տեղ քահանայից զոհ են դառնում. տարաբաղդների ա-
,, րիւնը թափւում է գթառատ Աստուծոյ սեղանի առաջևը և
,, ֆանատիկների անմիտ ամբոխը երեսի վրա է ընկնում և հնա-
,, զանդւում է սրբապիղծ քահանայի ձայնին, որ աշխարհի փրկչի
,, սեղանի կարգումը կանդնեցնում է արիւնածարաւ էշաֆօտ։

,, Եթէ ոգին կամենայ չափել ապագայի անդունդը, նրա
,, աչքի առջև կըբացուի սոսկալի տեսարան, մինչև որ օրինաւոր-
,, կառավարչի ձեռը չըքանդէ դաւաճանութիւնը. երբ որ կառա-
,, վարութիւնը թոյլ է, երբոր ատեանաւորները դողում են,
,, երբ որ լեռնին չեն հաւատացած, թէ էս ներկայ խռովութիւնի
,, նման խռովութիւն պատահելու ժամանակը պէտք է մեռնել
,, կամ յաղթել, լաւ է նրան խեղդելու աշխատելիս վէր ընկնել,
,, քան թէ դանդաղ ընչասպառ լինել բանտերումը կամ տան-
,, ջանքի մէջ հալուող և անգութ յաղթականի աչքի առջև, մէկ
,, խօսքով երբ որ պէտք է կատարուի անգութ դիտաւորութիւնը, որի
,, սկիզբը բացուել է Կատալօնիայումը, - տարաբաղդ Իսպանիա,
,, քեզանից կըմնայ միայն տխուր յիշատակ, որից կըսարսափի օտար
,, երկրացին, քո հնազանդ ժողովուրդները ընկած խոր աղքատու-
,, թեան մէջ կըդառնան վանքերի ժառանգութիւն և վերջապէս
,, կ'անհետանան, թողնելով իրանցից յետոյ միայն աւերակներ և
,, դիեր: Սիշտը, էշաֆօթը, ողջակէզների աղաղակը և անմեղ-
,, ների արիւնը նշաններ կըդնեն էն ճանապարհի վրա, որ մէկ օր
,, պէտք է էս լեռը կեղծաւորներին հասցնէ դահճի: Մեր ընդհա-
,, նուր բաժանման վերջը էն կըլինի, որ մեր որդիքը անկարու-
,, թիւնից ազատուելով օգնութիւն ստանալ էն ձեռքից, որ
,, թաց է իլած իրանց հօրերի արիւնով, կըդառնան աւար առա-
,, ջին օտար բռնակալին, որ կըխղճահարուի մեր փչանալու վրա,,:

Աս լեզուաւ խօսեցաւ Բարցելօնիոյ Նախարար-Ֆիսկալը իրա ճառը Ֆերդինանդ Է-ի առջև, երբոր էս թագաւորը Կատալօնի-այի աղմուկից զարհուրած եկաւ էս դաւառը համարեա թէ 25 հազար ընտիր զօրքերով աղմուկը հանդցնելու համար: Թագաւորը չըթողեց առանց մտադրութեան դաղտնի պատճառները, որոնք զարհուրելի սկզբնաւորութիւն դառան ընտանի պատերազմի, և կարծես թէ, կամենում էր իրա բոլոր բարկութիւնը թափել էն մարդկերանց վրա, որոնց հետ հեզութեամբ վարուիլը գցեց նրան կնատութեան ([illegible]) մէջ: Նա չըխախտուեցաւ խռովութեան իսկական գործողների ճանաչելումը, բայց նրանց բռնելը դժուար էր, էնդուր որ նրանք ամէնքը հագած էին կրօնաւորական շորեր: Թագաւորը խիստ հարկաւոր համարեց ընդհանուր եկեղեցական նե-րողութիւն գործ ածել, և շրջաբերական թղթով խնդրեց եպիս-կոպոսներից յորդորել հաւատացեալներին հնազանդիլ իշխանու-

թեանց, կարծելով թէ էս հնարքով ապստամբները զէնքը վեր կըդնեն։ Այս տխուր հնարքները կտրական ոչինչ օգուտ չըբերին. էն ժամանակը Ֆերդինանդը հրամայեց Կատալօնիայից բոլոր արքեպիսկոպոսներին և եպիսկոպոսներին հաւաքուիլ Տարրակոնէում։

Պատասխանը, որ նա ստացաւ էն ժամանակը Վիկից եպիսկոպոսից, յայտնի ցոյց է տալիս, թէ էն ընտանի պատերազմի նպատակը, որը որ առել էին կրօնաւորները և քահանաները, Ինկվիզիցիայի վերականգնելն էր։

„Արքայ, - պատասխանեց եպիսկոպոսը, - Ձեր մեծութեան
„կամքն է հաւաքել ուսեալ Կաթոլիկների ժողով, որ վերացնէ
„նեն բոլոր շարադրութիւնները, բայց մենք առանց էն էլ տեսնում ենք շատ թունաւոր գրքեր, որոնք ժողովուրդի ձեռքերումը ման են գալի, որպէսի են՝ Թոմիսյ Պէնիացիոյ, Եկէդէնի, և այլն։

„Ձեր մեծութեան կամքն էր հրամայել դնել գործերը
„էն դրութեան մէջ, ինչպէս էին 1820 թուի Մարտի 7 ից
„առաջ, բայց դուք տակաւին չէք վերականգնել Ինկվիզիցիայի դատարանը, որ վաղուց վերացնել է կրօնի և միապետութեան
„հակառակ գրքերը„։

Այս պատճառների վրա հիմնելով Վիկիյ եպիսկոպոսը չէր կամենում հնազանդել նախարարի հրամանին, և էն բոլորին նա ասում էր թագաւորին՝ „Այդ որ ձեր հպատակները պատերազմում են իրաւացի գործի համար„։

Ոչ թագաւորի ներկայութիւնը, ոչ բազմաթիւ զօրքը չկարացին մինչև 1827 տարին էլ հնազանդեցնել Ագրավիադոսների (անբաւականներ) կատաղի ամբոխներին, որոնք անդադար աղաղակում էին „Կեցցէ Ինկվիզիցիա, մեռցին նեգրոսները (ազատականք)„։ Ագրավիադներից մի քանիսը կամենում էին զէնքերը վեր դնել, բայց նկատելով, թէ փոխանակ խաղաղած ներողութեան նրանց բանում են բանտերումը՝ ձեռք չընկածները փախան սարերը, և նրանց անդադար հետապնդում էր կոմս Իսպանեան. բանտերումը բռնածները մահի դատապարտուեցան։ Այս էն ժամանակը Տարրագոնիան մի ամսից աւելի թատրոն էր դառել արիւնահեղ տեսարանների, որոնց պատճառն էր միայն հոգևորական և քաղաքական իշխանութեանց մէջ ծագուած վէճը։ Քանի որ մահուան վճիռները կատարւում էին հոգևորականներից վարձած զօրքերի վրա,

Հոգեւորականները մունջ էին կացել. բայց երբոր կարգը Հասա-ւդ բաւխաղանների գլխաւորներին, որոնք վանքերի սեպհականե-լ էին, էն ժամանակը Հոգեւորականները ժաժ տուին երկինքը եւ եր-կիրը, որպէս զի կարողանան օրհասական վճռին առաջքը առնել. Այս կերպով արգելուեցաւ մահուան պատիժը կանոնիկ Կորմսի եւ Հայր Պուգնալի (որոնց դատավճիռը արդէն հրատարակուած էր եւ տպագրուած): Այս բանը գոնեա մի լաւ հետեւանք ունեցաւ, այնէ՝ վերջացրին արեան Թափելը, երբ որ այս երկու գլխաւոր աղմկայոյզները միացին անշնա

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

## ԽՍՊԱՆԻՈՅ ԻՆԿՎԻԶԻՑԻԱՅԻ ԶՈՀԵՐԻՆ

### 1481 էն մինչև 1808 տարին։

| | Կենդանւոյն այրեցան։ | Պատկերներով այրեցան։ | Նաւատորմի մշտական թիավարութեան դատապարտւեցան և բանտարկւեցան։ |
|---|---|---|---|
| 1481 էն մինչև 1498 տարին—Տորքվեմադի ժամանակումը . . . . . . | 10, 220. | 6, 840. | 97, 371. |
| 1498 էն մինչև 1507 տարին—Դեզայի ժամանակումը . . . . . . | 2, 592. | 829. | 23, 952. |
| 1507 էն մինչև 1517 տարին—Ցիմենեսի ժամանակումը . . . . . | 3, 564. | 2, 232. | 48, 559. |
| 1517 էն մինչև 1521 տարին—Ադրիանի ժամանակումը . . . . . . | 1, 620. | 560. | 21, 835. |
| 1521 էն մինչև 1523 տարին—անթագաւորութեան միջոցումը . . . | 324. | 112. | 4, 481. |
| 1523 էն մինչև 1538 տարին—Մանրիկի ժամանակումը . . . . . . | 2, 250. | 1, 125. | 11. 250. |
| 1538 էն մինչև 1545 տարին—Տավերայի ժամանակումը . . . . . . | 840. | 420. | 6, 520. |
| 1545 էն մինչև 1556 տարին—Լօյասիզի և Կարլ Ե-ի ժամանակումը . . | 1, 320. | 660. | 6, 600. |
| 1556 էն մինչև 1597 տարին—Ֆիլիպպ Բ-ի ժամանակումը . . . . . | 3, 920. | 1, 845. | 18, 450. |
| 1597 էն մինչև 1621 տարին—Ֆիլիպպ Գ-ի ժամանակումը . . . . . | 1, 840. | 692. | 10, 616. |
| 1621 էն մինչև 1665 տարին—Ֆիլիպպ Դ-ի ժամանակումը . . . . . | 2, 852. | 1, 428. | 14, 080. |
| 1665 էն մինչև 1700 տարին—Կարլ Բ-ի ժամանակումը . . . . . . | 1, 632. | 540. | 6, 512. |
| 1700 էն մինչև 1746 տարին—Ֆիլիպպ Ե-ի ժամանակումը . . . . . . | 1, 600. | 760. | 9, 120. |
| 1746 էն մինչև 1749 տարին—Ֆերդինանդ Զ-ի ժամանակումը . . . . . | 10. | 5. | 170. |
| 1749 էն մինչև 1788 տարին—Կարլ Գ-ի ժամանակումը . . . . . . | 4. | — | 56. |
| 1788 էն մինչև 1808 տարին—Կարլ Դ-ի ժամանակումը . . . . . . | — | 1. | 543. |
| Բոլորը | 34, 658. | 18, 049. | 238, 214. |

Բաց 'ի սրանից Տորրադանիոյ բանտը, որի մէջ դցում էին ադրաւխադոմները, էս փանատիկները անուանում էին երկնից ճանա-պարհ, Թէպէտ էս Ճանապարհը մին հասարակ հոր էր, ինչպէս Ինկ-վիզիցիայի միւս բանտերըն էլ, որոնց մէջ առանց դատաստանի բոլոր բանտարկեալների գլուխները կտրում էին։

Ուրեմն Իսպանիոյ Ինկվիզիցիայի 1481ից մինչև 1808ը բոլոր զո-հերի Թիւըն է 340,921, չըհաշուելով բանտարկածներին և Թի-ոյ ծառայութեան բըշածներին Ֆերդինանդ Ե-ի ժամանակում, որոնց Թիւը անչափ շատ է։

Եթէ Թերակղզի մէջ դատապարտուածների գումարի վրա աւելացնենք Իսպանիոյ Ինկվիզիցիայի տարածած ուրիշ երկրնե-րում դատապարտերոց Թիւը, զորօրինակ Սիցիլիայում, Սարդի-նիայում, Ֆլանդրիայում, Ամերիկայում, Հնդկաստաններում և այլն, էն ժամանակը կըստանանք զարհուրելի գումար տարաբաղդների, որոնց ծայրագոյն դատարանը դատապարտել է կամելով նրանց լաւ կաթոլիկներ չինել։

Ինկվիզիցիան իրա աւտո-դա-ֆէ հանդէսներով ոչ Թէ միայն փչացրուց Իսպանիոյ բնակչաց տասներորդ մասը, այլ և յա-րոյց ընտանի պատերազմներ, խռովութիւններ, Հրէից և Մաւրերի հալածանքներ ծայրագոյն դատարանի զարհուրելի ելած ժամանա-կում։ Հինգ միլիոն մարդից աւելի գեղեցիկ Իսպանիայի երկրնե-րից անյայտ ելան։ Էս բարբարոսական դատարանի համար կարելի է ասել, Թէ նա փոխանակ ուղղափառների Թիւը աւելցնելու, պակասեցրուց մարդկանց Թիւը։

ՎԵՐՋ։

# ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԻՊԱԿՆԵՐ։

| Երես. | Տող. | Վրիպակ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| 9. | 26. | ═══ | ժողովք , |
| 23. | 31. | եղած | կային։ |
| 28. | 36. | պաշտպանիլ | պաշտպանել . |
| 54. | 4. | էլ | էր . |
| 59. | 8. | դադարելով | դադրելով . |
| 69. | 10. | պէպք | պէտք . |
| — | 11. | գնելու | գնելու . |
| — | 22. | էն | են |
| 75. | 1. | գործում | գործւում , |
| 84. | 29. | չըմնալ | չի մնալ . |
| 100 | 5. | վերապջէս | վերջապէս |
| 103 | 17. | 1320 | 1302. |
| 11 | 36. | լինի | չըլինի . |
| 21. | 12. | Մորադանեյ | Մորադանեայ |
| 25. | 6. | դրուեցաւ | տրուեցաւ : |
| 27. | 6. | 804 | 80. |
| — | 19. | 3440 | 3396. |
| 28. | 24. | Մաւերի | Մաւրերի . |
| — | 32. | վճիժը | վճիռը . |
| 36 | 26. | 4576 | 4552 |
| — | 34. | գեղել | գեղել . |
| 40 | 10. | 6656 | 6356. |
| 45 | 13. | կանոնարուե | կանոնադրուե . |
| 51 | 27. | Կարը | Կարլ . |